

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ Եվրասիական երկրների բազմակուսակցական համակարգերի առանձնահատկությունները

ՊԵՏՐԱ ՇՏԻԿՈՎ

Մյունխենի Լյուդվիգ Մաքսիմիլիան համալսարան, Գերմանիա

Հռոլվածում ուսումնասիրվում են Եվրասիայի տասներկու կիսաժողովրդավարական և ոչ ժողովրդավարական պետությունների կուսակցական համակարգերի կառուցվածքը և մրցունակությունը, կուսակցությունների ինստիտուցիոնալացման մակարդակը և դրանց դերը կառավարության ձևավորման և լուծարման հարցում: Ղազախստանի, Ռուսաստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի և Թուրքմենստանի հեգեմոնիստական կուսակցական համակարգերում անձնավորված գերիշխող կուսակցությունները նախագահական իշխանությունը տեղափոխում են ընտրական և օրենսդիր համակարգեր: Միաժամանակ, դրանք «իշխող կուսակցություններ» չեն: Ի հակադրություն դրան, Վրաստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Ուկրաինան և Հայաստանն ունեն ավելի բազմակարծիք և մրցունակ կուսակցական համակարգեր՝ բարձր անկայունության տարրերով: Այս խմբի երկրներում կուսակցություններն առանցքային դերակատարներ են կառավարության ձևավորման և լուծարման գործում: Այս երկու մոդելներն արտացոլում են ցանցային «ուժային բուրգերի» կառուցվածքն ու դինամիկան պատրոնաժային ռեժիմներում, այլ ոչ՝ քաղաքականության իրական «կուսակցականացումը», որը հատուկ է արևմտյան ժողովրդավարություններին:

Բանալի բառեր

Կուսակցություն, բազմակուսակցական համակարգ, վարչակարգ, Եվրասիա

Նախաբան

1980-ականների վերջին Եվրոպայի արևելքում և հարավ-արևելքում կոմունիզմի տապալումը և Խորհրդային Միության կազմալուծումն առաջ բերեցին աննախադեպ մարտահրավերներ: Ոչ միայն հետխորհրդային պետությունների բնակչության մեծամասնությունն, այլև արևմտյան դիտորդները պնդում էին, որ իրենք ականատես են ավելի քան երկու տասնյակ պետություններում միաժամանակյա արմատական անցմանը ժողովրդավարությանն ու շուկայական տնտեսությանը: Որպես պատմականորեն եզակի գործընթացի մի մաս, կուսակցությունները և կուսակցական կառավարությունները պետք է

դառնային նոր քաղաքական համակարգերի ստեղծման հիմնասյուն՝ կարճ ժամանակահատվածում վերարտադրելով Արևմուտքի դարերի պատմություն ունեցող փորձը, որտեղ ժամանակակից ժողովրդավարություններն առաջացել են որպես «կուսակցությունների միջև մրցակցության կողմնակի արդյունք»¹:

Հետխորհրդային աշխարհի զարգացումը ընթանում էր դանդաղ և ոչ այն ձևով, որն ի սկզբանե կանխատեսում էին հետազոտողները: Դա հասկապես վերաբերում է Խորհրդային Միության իրավահաջորդ եվրասիական պետություններին: Վերջիններում, բացառությամբ Բայթյան պետությունների, վերջին քսանհինգ տարվա ընթացքում չի հաստատվել լիբերալ ժողովրդավարություն, իսկ կուսակցությունները չեն դարձել քաղաքականության առանցքային դերակատարներ: Այդուհանդերձ, այդ պետություններում ոչ միայն գոյություն ունեն կուսակցություններ ու կուսակցական համակարգեր, այլև դրանք զգալիորեն տարբերվում են միմյանցից: Տարածաշրջանային երկրների օրենսդիր իշխանությունները կուսակցություններից անկախ են, օղակված են լավ համակարգված «կուսակցություններով» և գտնվում են նախագահի կամ մասնատված ու բավական անկայուն, սակայն «իրական» բազմակուսակցական խորհրդարանի ուժեղ վերահսկողության ներքո: Կուսակցական կառավարությունը դարձել է բնականոն երևույթ միայն որոշ պետությունների դեպքում:

Հոդվածի նպատակն է դասակարգել եվրասիական դեպքերն՝ ըստ կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման երեք հիմնական ուղղությունների, որոնց հայեցակարգը մշակվել է համեմատական ուսումնասիրության շրջանակներում՝ դիտարկելու համար կուսակցություններն ու կուսակցական համակարգերը երրորդ ալիքի ժողովրդավարություններում, որոնք առաջացել են քսաներորդ դարի վերջին երեք տասնամյակում: Հայեցակարգը «պատրոնաժային քաղաքականության» եվրասիական մոդելին համապատասխանեցնելու ճանապարհով հոդվածում ուսումնասիրվում են կուսակցական համակարգերի կառուցվածքն ու մրցունակությունը, կուսակցությունների ինստիտուցիոնալացման մակարդակն ու դրանց դերը կառավար-

¹ **Schattschneider E. E.**, Party Government. New York: Farrar and Rinehart, 1942, p. 4.

րության ձևավորման և լուծարման գործում տասներկու հետխորհրդրդային հանրապետություններում: Բոլոր երեք ուղղություններով եվրասիական երկրների քաղաքականությունների միջև առկա զգալի տարբերությունները կարելի է ներկայացնել մի քանի օրինաչափություններով: Հոդվածում էմպիրիկ տվյալները մեկնաբանվում են մի կողմից ժողովրդավարության, մյուս կողմից՝ «պատրոնաժային քաղաքականության» տեսանկյունից: Ցույց է տրվում, որ եվրասիական պետությունների կուսակցությունների ու կուսակցական համակարգերի դինամիկան ցանցային «ուժային բուրգերի» ստեղծման, կայացման կամ տապալման և վերադասավորման դրսևորումներից մեկն է:

1. Կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացումը պատրոնաժային ռեժիմներում

Լիբերալ ժողովրդավարությունն անհնար է պատկերացնել առանց կուսակցական պլյուրալիզմի²: Կուսակցությունները ինտեգրում են հասարակությունները՝ համախմբելով միևնույն շահեր ունեցող տարբեր անձանց: Դրանք միավորում, ձևակերպում ու ներկայացնում են այդ շահերը քաղաքականության մեջ՝ ընտրազանգվածի համար ապահովելով քաղաքական այլընտրանքներ և խթանելով քաղաքացիների քաղաքական մասնակցությունը: Կուսակցությունները ձգտում են հաղթել ընտրություններում, ձևավորել կառավարություն և իրականացնել համապատասխան քաղաքականություն: Մակայն, նոր ձևավորված ժողովրդավարություններում նույնիսկ առավել բարենրպաստ պայմաններում կուսակցությունների և կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացումը պահանջում է երկար ժամանակ:

Ժողովրդավարացման մեկնարկից ավելի քան երկու տասնամյակ անց Գենտրոնական և Արևելյան Եվրոպայի հետխորհրդային պետությունների մեծ մասին դեռևս բնորոշ են անկայուն կուսակցություններ ու կուսակցական համակարգեր³: Միաժամանակ, այդ երի-

² Lipset S. M., The Indispensability of Political Parties, *Journal of Democracy*, 2000, 11, 1, 48–55.

³ Casal Bértoa F., Mair P., Party System Institutionalization across Time in Post-Communist Europe. *Keman H., Müller-Rommel F. (eds.), Party Government in the New Europe*, pp. 85–112, London: Routledge, 2012; Houghton T., Deegan-

տասարդ ժողովրդավարություններում կուսակցությունները համարվում են քաղաքականության առանցքային դերակատարներ⁴, իսկ խորհրդարանական կուսակցական խմբերը դարձել են խորհրդարանի ներքին կազմակերպման գլխավոր հիմնասյուներ, ինչպես նաև կառավարության ձևավորման հիմնական դերակատարներ⁵:

Նույնը չի կարելի ասել Խորհրդային Միության «հետնորդ» պետությունների մասին, որտեղ կուսակցությունների և կուսակցական համակարգերի զարգացման խնդիրներն ավելի բարդ են, տևական և միանգամայն այլ բնույթի: Ի տարբերություն Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների, եվրասիական նոր ազգ-պետությունների ձևավորումը սկսվել է ոչ բարենպաստ պայմաններում՝ ժողովրդավարական ավանդույթների բացակայություն, գերանձնավորված քաղաքականություն, նախազահակենտրոն սահմանադրություններ և Արևմուտքից տրամադրվող ոչ բավարար աջակցություն: 2010թ. տարածաշրջանի վերջին երկիրը՝ Թուրքմենստանը, օրինականացրեց կուսակցական պլյուրալիզմը: Ուստի, ներկայումս Եվրասիայի բոլոր տասներկու պետությունները ֆորմալ առումով ունեն բազմակուսակցական համակարգեր: 21-րդ դարի սկզբին տեղի ունեցան ինստիտուցիոնալացմանն ուղղված կարևոր գործընթացներ: Ընդհանուր առմամբ, հետխորհրդային տարածքի պետություններում կուսակցությունները և միջկուսակցական մրցակցությունը զգալիորեն տարբեր են հետխորհրդային աշխարհի այլ մասերում տեղի ունեցող զարգացումներից: 21-րդ դարի սկզբին գիտնականներն այդ տարբերությունները բնորոշել են որպես «հսկայական բաժանում»՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ժողովրդավարական պետություններն առանձնացնելով նախկին Խորհրդային Միության ավտոկրատական պետություններից⁶:

Krause K., Hurricane Season. Systems of Instability in Central and East European Party Politics, *East European Politics and Societies*, 2015, **29**, 1, 61–80.

⁴ **Ibenskas R., Sikk A.**, Patterns of Party Change in Central and Eastern Europe, 1990–2015, *Party Politics*, 2017, **23**, 1, 43–54.

⁵ **Olson D. M., Honszki G.**, Two Decades of Divergent Post-Communist Parliamentary Development, *Journal of Legislative Studies*, 2011, **17**, 2, 234–55.

⁶ **Way L. A., Levitsky S.**, Linkage, Leverage, and the Post-Communist Divide, *East European Politics and Societies*, 2007, **21**, 1, 48–66; **Møller J., Skaaning S.**, The Three Worlds of Post-Communism. Revisiting Deep and Proximate Explanations, *Democratization*, 2009, **16**, 2, 298–322.

Միաժամանակ, Եվրասիական տարածաշրջանի պետությունների միջև ևս կան զգալի տարբերություններ:

Հոդվածում ներկայացվող ներտարածաշրջանային վերլուծության մեկնակետը «կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացումն է»: Վերջինս առանցքային հայեցակարգ է նոր ձևավորվող ժողովրդավարություններում կուսակցությունների և կուսակցական համակարգերի վերաբերյալ համեմատական հետազոտություններում: Դա կարելի է բնորոշել որպես մի գործընթաց, որում կուսակցությունների միջև փոխազդեցության օրինաչափությունները ժամանակի ընթացքում դառնում են ավելի կանխատեսելի և կայուն⁷: Մասնագիտական գրականության մեջ այս հայեցակարգը սովորաբար օպերացիոնալացվում է հետևյալ ձևերով 1) միջկուսակցական մրցակցության կանոնների և օրինաչափությունների կայունացում, 2) ընտրողների հետ կապերի ամրապնդում, կամ հասարակության մեջ կուսակցական արմատների ամրապնդում, 3) կուսակցությունների և ընտրական գործընթացի լեգիտիմության վերաբերյալ հիմնական քաղաքական դերակատարների միջև փոխհամաձայնության ձեռքբերում, 4) կուսակցությունների՝ որպես կոլեկտիվ դերակատարների, հարաբերական անկախացում դրանց առաջնորդների շահերից⁸:

Երիտասարդ ժողովրդավարությունների վերաբերյալ եմպիրիկ վերլուծությունները ցույց են տալիս, որ դրանք հաճախ պառակտվում են կուսակցությունների և կուսակցական համակարգերի թույլ ինստիտուցիոնալացման պատճառով: Վերջինս ենթադրում է միջկուսակցական մրցակցության օրինաչափությունների անկանոնություն, թույլ կուսակցական արմատներ հասարակության մեջ, կուսակցությունների պակաս լեգիտիմություն և ավելի թույլ կուսակցություններ, որոնք հաճախ անձնավորված են⁹: Առաջին հայացքից սա կարելի է վերագրել նաև Եվրասիական պետություններին, որտեղ բացի ժողովր-

⁷ **Casal Bértoa F., Mair P.**, Op. cit., p. 87.

⁸ **Mainwaring S., Scully T. R. (Eds.)**, Building Democratic Institutions. Party Systems in Latin America. Stanford, CA, Stanford Univ. Press, 1995. **Mainwaring S., Torcal M.**, Party System Institutionalization and Party System Theory after the Third Wave of Democratization, *Katz R. S., Crotty W. J. (eds.)*, *Handbook of Party Politics*. London, Thousand Oaks, CA: Sage, 2006, pp. 204–227.

⁹ **Mainwaring S., Torcal M.**, Op. cit., p. 207.

դավարության նվազագույն չափանիշների բավարարող Մոլդովայից, Ուկրաինայից և Վրաստանից, գերակշռող են ավտորիտար վարչակարգերը: Սակայն, այդ բնորոշումը շատ մակերեսային է: Կուսակցությունների և կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման երկրորդ և չորրորդ չափումները չի կարելի պարզապես բնորոշել որպես «թույլ»: Այդ հասարակություններում կուսակցությունները կայացած չեն: Դրանց բնորոշ է «անձնավորված քվեարկություն»՝ կուսակցությունների և ընտրազանգվածի կապը հիմնված չէ ծրագրային կամ գաղափարական դիրքորոշումների վրա¹⁰: Ավելին, կուսակցությունների մեծ մասն առաջնորդի շուրջ կենտրոնացած քաղաքական մեխանիզմներ են, որոնք չունեն բավարար «կուսակցական ներուժ»: Վերջինս ենթադրում է անդամակցության վրա հիմնված կազմակերպությունների միջև փոխհամաձայնություն ապահովելու կարողություն՝ թեկնածուների առաջադրման, ընտրողների շահերի համախմբման, ազգային քարոզարշավների անցկացման և պետական իշխանության իրականացմանը մասնակցության ճանապարհով¹¹:

Կուսակցությունների ինստիտուցիոնալացման բացը պայմանավորված է «պատրոնաժային քաղաքականությամբ», որը բնորոշ է տարածաշրջանի բոլոր երկրներին: Այդ քաղաքականության դեպքում «անհատները կազմակերպում են իրենց քաղաքական և տնտեսական գործունեությունն առաջին հերթին կոնկրետ պարզների տրամադրման և պատիժամիջոցների կիրառման շրջանակներում՝ ծանոթության շղթայի միջոցով»¹²: Նման զարգացումների դեպքում քաղաքական դաշտը կառուցվում է քաղաքական և տնտեսական ընդլայնված ցանցային համակարգի հիմքի վրա, որը տարածվում է պետության, հասարակության և տնտեսության վրա: Այդ համակարգերը կազմված են քիչ թե շատ միմյանցից անկախ անհատներից և խմբերից, որոնք ձգտում են իշխանության, համախմբվում են իրենց հովանավորների շուրջ և կապեր հաստատում այլ ցանցերի հետ՝ ձևավորելով «ուժային

¹⁰ **Mainwaring S., Torcal M.**, Op. cit.

¹¹ **Samuels D. J., Shugart M. S.**, Party ‘Capacity’ in New Democracies. How Executive Format Affects the Recruitment of Presidents and Prime Ministers, *Democratization*, 2014, **21** (1), 137–160.

¹² **Hale, H. E.**, *Patronal Politics. Eurasian Regime Dynamics in Comparative Perspective*. New York: Cambridge University Press, 2015, p. 10.

բուրգեր»։ Այդ համատեքստում կուսակցությունները ևս կարող են գործել և երբեմն նույնիսկ կարևոր դերակատարություն ունենալ, ինչպես ներկայացվում է ստորև։ Այդուհանդերձ, չնայած միջկուսակցական պայքարը ընտրական և օրենսդրական ոլորտներում, կառավարությունների ու կուսակցությունների ձևավորումը և լուծարումը արտացոլում են էլիտաների միջև պայքարը և պետական ռեսուրսների շուրջ բանակցությունները, պարտադիր չէ, որ հենց կուսակցությունները կազմակերպեն և կառուցեն այդ պայքարը։ Կուսակցությունները համարվում են այն «պիտակները», որոնք այդ ցանցերն օգտագործում են իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար։

Եվրասիական պետությունների քաղաքականությունը դիտարկելիս հարկ է վերաձևակերպել կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման խնդիրը։ Խաղաքարտին դրված են ոչ միայն կուսակցական համակարգերի կայունությունը և կուսակցությունների՝ որպես քաղաքական դերակատարների լեգիտիմությունը։ Կարևոր հարցերն ավելի առանցքային են, քան կուսակցությունների՝ որպես ժողովրդավարացման հիմնական դերակատարների ուսումնասիրումը։ Դրանք վերաբերում են պատրոնաժային ռեժիմներում էլիտայի համակարգման գործում կուսակցությունների դերակատարությանը։ Ինչպե՞ս են կառուցված կուսակցական համակարգերը։ Արդյո՞ք կուսակցությունների միջև կա մրցակցություն և ի՞նչ է այն պատրոնաժային քաղաքականության տեսանկյունից։ Արդյո՞ք կուսակցություններն ունեն որևէ դերակատարություն օրենսդիր և գործադիր համակարգերում։

2. Եվրասիական պետությունների կուսակցական համակարգերը

2.1. Կուսակցությունների և կուսակցական համակարգերի տիպերը

Եվրոպայի բազմակուսակցական համակարգերը, որպես կանոն, կազմված են գաղափարական կուսակցական ընտանիքներից՝ ի տարբերություն Եվրասիայի կուսակցական համակարգերի։ Դրանց բաղկացուցիչ մասերը ավելի հստակ տարբերվում են ըստ ընդհանուր համակարգում ունեցած իրենց կառուցվածքային դիրքի։

Բացառությամբ Բելառուսի, տարածաշրջանի բոլոր պետությունների կուսակցական համակարգերի առանցքային տարրը, այսպես

կոչված, «իշխանության կուսակցությունն» է: 1990-ականներին այդ կարգավիճակն ունեցող կուսակցությունները նախագահին սատարող քաղաքական և տնտեսական ցանցերի ամորֆ կոալիցիաներ էին: Դրանք հիմնականում ստեղծվում էին խորհրդարանական ընտրությունների նախաշեմին, սակայն կարճ ժամանակում պասիվանում ու անհետանում էին: Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրորդ տասնամյակի սկզբին այդ «ընտրական մեքենաները» որոշ երկրներում կայացան: Իշխանության կուսակցությունները խթանում են էլիտայի միավորումը իշխող կոալիցիայի հետ: Նախագահին աջակցելու դիմաց վարչական ռեսուրսներին տիրապետելու շնորհիվ նման կուսակցություններին երբեմն հաջողվում է մոբիլիզացնել ընտրողներին և կազմակերպել ընտրական հաղթարշավներ¹³:

Իշխանության կուսակցությունները հիմնովին տարբերվում են կամավորական կազմակերպություններից, որոնք հիմնված են լիբերալ կուսակցական ժողովրդավարություններին հասուկ ֆորմալ անդամակցության վրա: Դրանց գոյությունը կախված է նախագահի հանձնառությունից, ով կամ կազմակերպական հովանավոր է կամ կուսակցության ղեկավար կամ երկուսը միասին: Կուսակցությունների առաջնորդների և անդամների միջև փոխհարաբերություններն առավել հաճախ անձնավորված են և առաջնորդվում են հավատարմության սկզբունքով, այլ ոչ ծրագրային և գաղափարական դիրքորոշումներով կամ կազմակերպական կանոններով: Ընդհանուր առմամբ, քաղաքական կյանքում կուսակցությունները գրեթե չեն իրականացնում ֆունկցիոնալ գործունեություն, այդ թվում՝ թեկնածուների առաջադրում կամ օրենսդրական գործունեություն: Նրանց կազմակերպական ներուժը թույլ է, իսկ կուսակցության նույնականացումն առաջնորդի հետ՝ ուժեղ¹⁴:

«Ավտորիտար ինստիտուտների» վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ Եվրասիայի իշխող կուսակցությունները

¹³ **Turovsky R.**, Party Systems in Post-Soviet States: The Shaping of Political Competition. *Perspectives on European Politics and Society*, 2011, **12**, 2, 197-213; **Makarenko B. I.**, Postsovetskaya partiya vlasti: 'Edinaya Rossiya' v sravnitel'nom kontekste (in Russian), *Polis*, 2011, 1, 42-65.

¹⁴ **Kostadinova T. Levitt B.**, Toward a Theory of Personalist Parties. Concept Formation and Theory Building, *Politics & Policy*, 2014, **42**, 4, 490-512.

սովորաբար բնորոշվորվում են որպես «գերիշխող կուսակցություններ»: Դա բնորոշ է կիսաժողովրդավարական և ոչ ժողովրդավարական երկրներին¹⁵: Գերիշխող կուսակցությունը վերահսկում է մուտքը դեպի կարևոր քաղաքական ինստիտուտներ, կիսում է քաղաքականության մշակման պատասխանատվությունը և օգտագործում է պետական ռեսուրսների տիրապետումն իշխանությունը պահպանելու համար¹⁶: Եվրասիական քաղաքականության շրջանակներում գերիշխող կուսակցությունները կարելի է որակել որպես «անձնավորված գերիշխող կուսակցություններ»¹⁷, ինչը պայմանավորված է հետխորհրդային քաղաքականության պատրոնաժային բնույթով:

Տարածաշրջանի պետությունների իշխանության կուսակցությունները տարբերվում են միմյանցից: Նախևառաջ, այդ տարբերությունները պայմանավորված են քաղաքականության անձնավորվածության աստիճանով: Դրա ծայրահեղ դրսևորումներից են Ղազախստանի «Նուր Օթան» կուսակցությունը¹⁸, Տաջիկստանի «Ժողովրդադեմոկրատական կուսակցությունը» և «Յենի Ադրբեջանը»¹⁹: Ի տարբերություն այդ կուսակցությունների, «Հայաստանի Հանրապետական կուսակցությունը» զբաղեցնում է ավելի չափավոր դիրք: Կուսակցության առաջնորդները մի քանի անգամ փոխվել են, ինչը ոչ անձնավորված ինստիտուցիոնալացման և ավելի թույլ նախագահակենտրոն բնույթ

¹⁵ **Greene K. F.**, The Political Economy of Authoritarian Single-Party Dominance, *Comparative Political Studies*, 2010, **43**, 7, 807–834; **Magaloni B., Kricheli R.**, Political Order and One-Party Rule, *Annual Review of Political Science*, 2010, **13**, 123–143.

¹⁶ **Reuter, O. J., Turovsky R.**, Dominant Party Rule and Legislative Leadership in Authoritarian Regimes, *Party Politics*, 2014, **20**, 5, 663–74; **Reuter, O. J., Gandhi J.**, Economic Performance and Elite Defection from Hegemonic Parties. *British Journal of Political Science*, 2011, **41**, 1, 83–110.

¹⁷ **Isaacs R., Whitmore S.**, The Limited Agency and Life-Cycles of Personalized Dominant Parties in the Post-Soviet Space. The Cases of United Russia and Nur Otan, *Democratization*, 2014, **21**, 4, 699–721.

¹⁸ **Isaacs R.**, Party System Formation in Kazakhstan. Between Formal and Informal Politics. London: Routledge, 2011, pp. 116–7.

¹⁹ **Hale H. E.**, Patronal..., Op. Cit., p. 474; **Ishiyama J.**, Political Party Development and Party ‘Gravity’ in Semi-Authoritarian States. The Cases of Azerbaijan, Kyrgyzstan, and Tajikistan, *Taiwan Journal of Democracy*, 2008, **4**, 1, 33–53.

ունենալու նշան է²⁰: «Միացյալ Ռուսաստան» կուսակցությունը զբաղեցնում է միջանկյալ դիրք՝ համադրելով «անձնավորված կուսակցությունն ուժեղ բյուրոկրատական տարրերի հետ»²¹: «Վրացական երազանքը»²² և Ուկրաինայի «Պետրո Պորոշենկոյի դաշինքը»²³ շարունակում են մնալ ընտրական և կառավարական ձևայնացված դաշինքներ: Դրանք ունեն անձնավորված բնույթ և համախմբվածության ցածր մակարդակ:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր իշխանության կուսակցություններն են կայացել որպես գերիշխող կուսակցություններ: Նախագահամետ ցանցային համակարգերի ձախողված «նախագծերն» ավելի շատ են, քան հաջողված դեպքերը: Օրինակ, Ռուսաստանում 1993 թվականից այդ «ընտրական մեքենաները» «կոփվել են» բոլոր ընտրությունների նախաշեմին: Միայն նախագահ Վլադիմիր Պուտինի օրոք «Միացյալ Ռուսաստանը» դարձավ եվրասիական գերիշխող կուսակցության օրինակ²⁴: Այդ կուսակցությունների ներուժը՝ ուղղված իշխանության պահպանմանն ու կայացմանը, այն հիմնական բնութագրիչներից է, որն առանձնացնում է տարածաշրջանի ավելի մրցունակ քաղաքական վարչակարգերը դրանց ավտորիտար հարևաններից: Հողվածում «կայացած գերիշխող կուսակցություն» կատեգորիան գործարկվում է որպես «իշխանության կուսակցություն», որը վերահսկում է օրենսդիր համակարգը առնվազն երկու հաջորդական օրենսդրական ժամկետներում և ունի մանդատների ավելի քան քառասունհինգ տոկոս:

Իշխանության կուսակցության ներուժը որոշվում է այն աստիճանով, որով կուսակցական պլյուրալիզմը պաշտոնապես թույլատրելի է տվյալ երկրում: Հետխորհրդային կուսակցական համակարգերը միմյանցից տարբերվում են նաև ընդդիմության գոյությամբ և խորհրդարանում դրանց ներկայացվածության աստիճանով: Իշխանու-

²⁰ EuFoA (European Friends of Armenia), Armenia 2012: An Introduction to the Political Party Landscape, 2012,

<http://www.eufoa.org/uploads/ArmeniaPoliticalPartyGuide.pdf> (25.02.2017).

²¹ Roberts S. P., *Putin's United Russia Party*. New York: Routledge, 2013, p.185.

²² Fairbanks Ch. H., *Georgian Democracy. Seizing or Losing the Chance?* *Journal of Democracy*, 2014, 25, 1, 154–165.

²³ Fedorenko K., et al, *The Ukrainian Party System before and after the 2013–2014 Euromaidan*, *Europe-Asia Studies*, 2016, 68, 4, 609–630.

²⁴ Roberts S. P., *Op. cit.*

թյան կուսակցություններին զուգահեռ, հողվածում առանձնացվում են նաև կուսակցությունների երեք այլ կատեգորիաներ: Առաջինն «արբանյակային կուսակցություններն» են, որոնք ստեղծվում են իշխանության կուսակցության շահերը ներկայացնող իշխող խմբի կողմից կամ առնվազն ստանում են դրա աջակցությունը: Դրանց զգալի մասը «կեղծ ընդդիմադիր կուսակցություններ» են, որոնք նպատակ ունեն իլել «իրական» ընդդիմության ձայները և աջակցությունը: Երկրորդը՝ «կիսաընդդիմադիր կուսակցությունները», որոնք ծավալում են որոշ ընդդիմադիր գործունեություն, սակայն չեն պահանջում գործող ռեժիմի հիմնարար փոփոխություններ: Այդ կուսակցություններն իրենց ներկայացնում են որպես «կառուցողական ընդդիմություն»: Դրանց առաջնորդներն ունեն երկակի դիրք. միաժամանակ գտնվում են իշխող կուսակցությունից դուրս, սակայն ինտեգրված են ընդհանուր ռեժիմին: Երրորդը «գլխավոր» կամ ոչ «համակարգային ընդդիմությունն» է, որը կազմված է կուսակցություններից կամ անհատներից, որոնք բացահայտ կերպով հակադրվում են գործող ռեժիմին: Տարածաշրջանի բոլոր պետությունների սահմանադրություններն այս կամ այն չափով սահմանափակում են կուսակցությունների քաղաքական գաղափարախոսությունները, ռազմավարությունները և նպատակները, սակայն հիմնական ընդդիմությունը, որպես կանոն, ունի իրավական կարգավիճակ: Միաժամանակ, դրա գործունեությունը սահմանափակված է կուսակցական և ընտրական կոշտ օրենքներով, որոնք նախատեսված են լուծելու կուսակցությունների գրանցման և ընտրության մասնակցության թվացյալ տեխնիկական խնդիրները: Ճնշումները ևս հաճախ քողարկվում են վարչական և դատական միջոցներով, բացասական քարոզչությամբ և քաղաքական «կոմպրոմատի» գործարկմամբ՝ ուղղված ընդդիմադիր կուսակցության առաջնորդների և ակտիվիստների դեմ:

Տարածաշրջանի կուսակցական համակարգերը տարբերվում են նաև ըստ իշխանության կուսակցության գերակայության աստիճանի: Անդրադառնալով Սարտորիի առաջ քաշած կուսակցական համակարգերի ավանդական տիպաբանությանը²⁵՝ հարկ է առանձնաց-

²⁵ **Sartori G.**, Parties and Party Systems: A Framework for Analysis. Cambridge: Cambridge University Press, 1976.

նել երեք տիպ: Առաջին՝ «հեզեմոնիստական կուսակցական ռեժիմներում» կանոնավոր կերպով անցկացվում են բազմակուսակ-ցական ընտրություններ, սակայն իշխանափոխություն չի նախատեսվում այնքան ժամանակ, քանի դեռ վարչակարգը չի տապալվել: Այդ դեպքում ընդդիմադիր կուսակցությունները «երկրորդ դասի լիցենզավորված կուսակցություններ են»²⁶, այլ ոչ՝ իրական մրցակիցներ: Եվրասիային բնորոշ է հեզեմոնիստական կուսակցական ռեժիմի երկու տարատեսակ: Տաջիկստանում և Ղազախստանում կայացած գերիշխող կուսակցությունները զբաղեցնում են խորհրդարանական տեղերի ավելի քան երեք քառորդը: Ռուսաստանի, Ուզբեկստանի և Թուրքմենստանի իշխանության կուսակցությունները նույնպես համապատասխանում են կայացած գերիշխող կուսակցության չափանիշներին: Սակայն, միայն արբանյակային կուսակցությունների շնորհիվ է, որ դրանք տիրապետում են մանդատների 75-100 տոկոսին:

Մնացած դեպքերում իշխանության կուսակցությունները ստիպված են մրցակցել իրական, սակայն սահմանափակ կուսակցական պյուրալիզմի, ինչպես նաև իրական, սակայն այս կամ այն չափով կեղծ ընտրությունների պայմաններում: Դա բնորոշ է «գերիշխող կուսակցական համակարգերին», որոնցում ոչ միայն արգելված չէ ընդդիմադիր կուսակցությունների գոյությունը, այլև վերջիններս պարբերաբար ընդդիմանում են իշխող կուսակցությանը, եթե այն չի գործում արդյունավետ: Քանի որ գոյություն չունի իշխող կուսակցական համակարգի համընդհանուր սահմանում²⁷, հողվածում այդ կատեգորիան նախևառաջ օգտագործվում է այն կուսակցական համակարգերի համար, որոնք ունեն կայացած գերիշխող կուսակցություն, որն առնվազն երկու իրար հաջորդող օրենսդրական ժամկետներում զբաղեցնում է խորհրդարանական տեղերի բացարձակ մեծամասնություն: Երկրորդ, իշխող կուսակցական համակարգերում ներկայացված են բավարար թվով ընդդիմադիր կուսակցություններ:

Բոլոր այն կուսակցական համակարգերը, որոնք ունեն ընդդիմադիր և իշխանության կուսակցություններ, սակայն չեն բավարարում

²⁶ Sartori G., Op. cit., p. 230.

²⁷ Sartori G., Op. cit., pp. 192-201.

վերջին չափանիշին, կարող են որակվել որպես «պլյուրալիստական կուսակցական համակարգեր»:

2.2. Եվրասիայի քարտեզագրում

Կայուն հեգեմոնիստական կուսակցական համակարգեր: Հեգեմոնիստական կուսակցական համակարգ ունեցող երկրների առավել ցայտուն օրինակներ են Ադրբեջանը, Տաջիկստանը, Ղազախստանը և 2003 թվականից՝ Ռուսաստանը: Այդ երկրներում անկախացումից ի վեր խորհրդարանական ընտրություններին մասնակցել են առնվազն մի քանի կիսաընդդիմադիր և ոչ համակարգային կուսակցություններ: Այդուհանդերձ, ընտրության օրը գրանցված կուսակցությունների թիվը կիսով չափ կրճատվել է: Սա ազդում է հատկապես հիմնական ընդդիմադիր կուսակցության վրա, որը սովորաբար դուրս է մնում խորհրդարանից, իսկ իշխանության կուսակցությունը ստանում է տեղերի բացարձակ մեծամասնությունը:

1999թ. Նուրսուլթան Նազարբայևի հիմնադրած «Նուր Օթան» կուսակցությունը 2004 թվականից Ղազախստանի գերիշխող կուսակցությունն է: Ընդդիմադիր կուսակցությունները կամ միացել են ռեժիմին կամ մարզինալացվել:²⁸ 2016թ. մարտին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Նուր Օթանը» ստացավ խորհրդարանական տեղերի 82,2 տոկոսը, իսկ «կառուցողական ընդդիմությունը» ներկայացնող երկու կուսակցություններ՝ յուրաքանչյուրը 7-ական տեղ՝ ընդհանուր 98 տեղից:

Տաջիկստանում նախագահ Էմոմալի Ռահմոնի «Ժողովրդադեմոկրատական կուսակցությունը», որը հիմնադրվել է 1998թ., գերիշխող դիրք է զբաղեցրել 2000 թվականի ընտրություններից հետո, երբ ստացավ խորհրդարանական տեղերի երկու երրորդը: Քաղաքացիական պատերազմին հաջորդած առաջին տասնամյակում ընդդիմության հետ իշխանության բաժանման խնդիրը սահմանափակում էր

²⁸ **Isaacs R.**, Op. cit.; **Nurumov D., Vashchanka V.**, Constitutional Development of Independent Kazakhstan, *Elgie R., Moestrup S. (eds.), Semi-Presidentialism in the Caucasus and Central Asia*, Palgrave Macmillan, 2016, pp. 143–172.

քաղաքական ռեժիմի գործունեությունը²⁹: Ընդդիմության հետ բանակցությունները և կոոպտացիան, ինչպես նաև երկու արբանյակային կուսակցությունների ստեղծումը իշխող կուսակցության հիմնական ռազմավարություններն էին: Վերջին մի քանի տարիների ընթացքում սահմանափակումները և ճնշումները զգալիորեն ուժեղացել են: 2015թ. դե ֆակտո արգելվեց Կենտրոնական Ասիայում իրավական կարգավիճակ ունեցող միակ կրոնական ընդդիմության՝ «Տաջիկստանի Իսլամական Վերածնունդ» կուսակցության գործունեությունը: Բացի Ժողովրդա-դեմոկրատական կուսակցությունից, որը ներկայումս զբաղեցնում է խորհրդարանական տեղերի 76 տոկոսը, հինգ այլ կուսակցություններ 2015թ. ընտրությունների արդյունքներով ստացան յուրաքանչյուրը 1-5 տեղ: Բոլոր կուսակցությունները նախագահամետ են՝ բացի Կոմունիստական կուսակցությունից (երկու տեղ), որը միակ կիսաընդդիմադիր «կառուցողական ընդդիմություն» է: Արդյունքում, ընտրությունները հաճախ որակվում են որպես «քաղաքական ֆարս»³⁰:

1992թ. Հեյդար Ալիևի հիմնած Ադրբեջանի իշխանության կուսակցությունը 1995 թվականից զբաղեցնում է մեծամասնական դիրք խորհրդարանում: Այս դեպքը հատուկ է, քանի որ «Յենի Ադրբեջանը» երբևէ միայնակ չի ստացել ձայների մեծամասնություն: Այն ապահովում է ձայների գրեթե 90 տոկոս մեծամասնություն՝ ապավինելով լրացուցիչ 30-50 պատգամավորների ձայների, ովքեր ներկայանում են որպես անկախ մանդատ ունեցողներ: Ընդհանուր առմամբ, երկրի կուսակցական համակարգը խիտ է՝ մոտ 70 գրանցված կուսակցու-

²⁹ **Borishpolets K.**, Elections in Central Asian State. Political Rivalry in a Transitional Society, *Central Asia and the Caucasus*, 2006, **1**, 37, 25-37; **Markowitz L. P.**, Tajikistan. Authoritarian Reaction in a Postwar State, *Finkel E., Brudny Y. M. (eds.), Coloured Revolutions and Authoritarian Reactions*, London: Routledge, 2013, pp. 98–119.

³⁰ **Mardon M.**, Neodnoznachnaya otsenka godovoi deyatel'nosti tadhikskogo parlamenta, *Radio Ozodi*. 17/06/2016 (in Russian), <http://rus.ozodi.org/a/27805100.html> (21.09.2016); **Mardon M.**, Naskolko dolgo prodlitsya 'molchanie' politikov v Tadhikistane? *Radio Ozodi*. 20/06/2016 (in Russian), <http://rus.ozodi.org/a/27809688.htm> (21.09.2016); **Mardon M.**, Talbakov: Kompartiya trebuet vernut' svoyu sobstvennost'. *Radio Ozodi*. 23/07/2016 (in Russian), <http://rus.ozodi.org/a/27876396.html> (21.09.2016).

թյուն, որոնք բավական մասնատված և անկայուն են³¹: 2015թ. խորհրդարանական ընտրություններում, որոնք բոլորտեցին հիմնական ընդդիմադիր կուսակցությունները, «Յենի Ադրբեջանը» ընդհանուր 125 խորհրդարանական տեղից զբաղեցրեց 69-ը: Այն նաև վայելում է 43 անկախ պատգամավորների և փոքր արբանյակային կուսակցությունների անդամ առվազն երեք պատգամավորների աջակցությունը:

Եթե հետխորհրդային շրջանի առաջին տասնամյակում Ռուսաստանի բազմակուսակցական համակարգը պլյուրալիստական և գերմասնատված էր, ապա 2003 թվականից «Միացյալ Ռուսաստանը» դարձավ գերիշխող կուսակցություն³²: 2016թ. սեպտեմբերի խորհրդարանական ընտրությունների արդյունքում նախագահի կուսակցությունը նորից ստացավ սահմանադրական մեծամասնություն, որն ուներ 2003-2011թթ.: Դումայի երեք արբանյակային կիսարնդդիմադիր կուսակցություններն այդ ընթացքում չեն փոխվել³³: 1993 թվականից ընտրություններում առաջադրվել են մի քանի ոչ համակարգային ընդդիմադիր կուսակցություններ: Սակայն, դրանցից ոչ մեկը չկարողացավ հաղթահարել 7 տոկոսի շեմը 2007թ. և 2011թ. համամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններում: 2016թ. գուգահեռ ընտրակարգի վերականգնումից հետո կիսարնդդիմադիր «Քաղաքացիական իշխանություն» կուսակցության թեկնածուներից մեկը հաղթեց միամանդատ ընտրատարածքում: Այս ցուցանիշն ավելի փոքր է, քան 2003թ., երբ գործում էր նույն ընտրական համակարգը, և ընտրական

³¹ **LaPorte J.**, Hidden in Plain Sight. Political Opposition and Hegemonic Authoritarianism in Azerbaijan, *Post-Soviet Affairs*, 2015, **31**, 4, 339–366; **Sultanova S.**, Challenging the Aliyev Regime. Political Opposition in Azerbaijan. *Demokratizatsiya*, 2014, **22**, 1, 15–37; **Allahyarova T.**, **Mammadov F.**, Political Parties in Azerbaijan. From One Election to Another. Baku: Center for Strategic Studies under the President of the Republic of Azerbaijan, 2010.

³² **Gel'man V.**, From 'Feckless Pluralism' to 'Dominant Power Politics'? The Transformation of Russia's Party System, *Democratization*, 2006, **13**, 4, 545–561; **Smyth R.**, Political Preferences and Party-Development in Post-communist States, *Demokratizatsiya*, 2012, **20**, 2, 113–132; **Roberts S. P.**, Op. cit.

³³ **Gel'man V.**, Party Politics in Russia. From Competition to Hierarchy, *Europe-Asia Studies*, 2008, **60**, 6, 913–930; **White D.**, Re-Conceptualising Russian Party Politics, *East European Politics*, 2012, **28**, 3, 210–224; **Wilson K.**, How Increased Competition Can Strengthen Electoral Authoritarianism. Party-System Pluralization in Russia, *Problems of Post-Communism*, 2016, **63**, 4, 199–209.

շեմը չհաղթահարած ութ կուսակցություններ մանդատներ ստացան համընդհանուր ուղղակի քվեարկությամբ:

Թուրքմենստանը և Ուզբեկստանը հեգեմոնիստական կուսակցական համակարգի ծայրահեղ օրինակներ են: Այդ երկրներում կուսակցական պլյուրալիզմը բացահայտ կեղծ է: 1999 թվականից Ուզբեկստանում անցկացված բոլոր չորս ընտրությունները և 2013թ. Թուրքմենստանում անցկացված առաջին «բազմակուսակցական» ընտրությունը (պաշտոնապես գրանցվել է 85-90 տոկոս մասնակցություն) հաստատում են միննույն օրինաչափությունը. խորհրդարանում տեղերը բաշխվում են նախապես ֆիքսված հարաբերակցությամբ: Հատկանշական է, որ նախագահին հարած կուսակցությանը վերապահված է ոչ թե տեղերի մեծամասնությունն, այլ ընդհանուր տեղերի մոտ մեկ երրորդը: «Լավագույն պարտվողը» ստանում է հաղթողի մասնաբաժնի երեք քառորդից պակաս, իսկ մյուս կուսակցությունները հաջորդում են նրան: Չնայած նման բաժանումը առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, այդուհանդերձ դա շահավետ է նախագահի համար: Այդ դեպքում վերջինս լիովին չի ապավինում իշխանության կուսակցությանը, այլ նաև, այսպես կոչված, փոխգործակցող «իշխանության կուսակցական համակարգին»: Դրանք կազմված են կազմակերպությունների սահմանափակ թվաքանակից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է արժեքների կամ սոցիալական խմբերի որոշակի խումբ: Օրինակ, Թուրքմենստանում Դեմոկրատական կուսակցության շուրջ գործում են Արդյունաբերողների և ձեռնարկատերերի կուսակցությունը, Առևտրային միությունը, Կանանց միությունը և Երիտասարդական ասոցացիան: Ուզբեկստանում բոլոր կուսակցությունները կրում են «դեմոկրատական» որակումը՝ Լիբերալ, Սոցիալ, Ժողովրդական և Ազգային վերածննդի դեմոկրատների կուսակցություններ: Ընդհանուր առմամբ, խորհրդարանական տեղերի բաշխումը արտացոլում է նախագահի տեսլականը սոցիալական խմբերի կամ գաղափարական հարցերի վերաբերյալ: Հայեցակարգային առումով չկան նույնիսկ կիսաընդդիմադիր կուսակցություններ: Դա դրսևորվում է, օրինակ, կուսակցությունների ընտրական ծրագրերի

միջև տարբերության բացակայությամբ³⁴։ Ուզբեկստանի նախկին նախագահ Կարիմովը կանոնավոր կերպով փոխում էր կուսակցությունն՝ ընտրելով այն, որը հանձն էր առնում նրան առաջադրել հաջորդ նախագահական ընտրություններում։

Անկայուն գերիշխող-պլյուրալիստական կուսակցական համակարգեր:

Տարածաշրջանի որոշ երկրներ ևս ունեն իշխանության կուսակցություններ, սակայն դրանք պակաս իշխող են, ավելի դյուրաբեկ և ունեն կարճ կյանք, ի տարբերություն հեգեմոնիստական համակարգերի: Մոլդովայի, Վրաստանի և Հայաստանի կուսակցական համակարգերը տատանվում են իշխող և պլյուրալիստական տարատեսակների միջև: Այս երկրներում իշխանության կուսակցությունները միայն երբեմն են ձեռք բերում կայունության որոշակի աստիճան:

Մոլդովայի առաջին երկու նախագահները անկարող էին ստեղծել իշխանության կուսակցություններ, սակայն իրավիճակը փոխվեց 2001թ.: Մոլդովայի Կոմունիստական կուսակցությունը, որը ձևավորվել էր 1993թ.՝ որպես Խորհրդային Մոլդովայի նույնանուն կուսակցության իրավահաջորդ, 2001-2009թթ. խորհրդարանում ուժեղ ազդեցություն ուներ: Որպես իշխող կուսակցություն՝ այն վերահսկում էր խորհրդարանական տեղերի մեծամասնությունը: 2010թ. երկրի կուսակցական համակարգը դարձավ պլյուրալիստական³⁵: Վերջին երկու խորհրդարանական ընտրություններին (2010-2014թթ.) մասնակցել են 31 կուսակցություններ, որից 18-ն՝ առաջին անգամ:

Վրաստանը մինչ օրս ունեցել է կուսակցական իշխանության երեք փուլ: 1995-2003թթ. իշխող էր Էդուարդ Շևարդնաձեի «Վրաստանի Քաղաքացիների միությունը», որը հիմնադրվել է 1993թ.³⁶:

³⁴ **Ismoilov S., Saidov S.**, On the Results of the Parliamentary Elections in Uzbekistan, *Central Asia and the Caucasus*, 2010, **11**, 1, 63-78.

³⁵ **Way L.**, *Lucan Pluralism by Default. Weak Autocrats and the Rise of Competitive Politics*. Baltimore: John Hopkins University Press, 2015, ch. 4; **Saran V.**, *Moldova's New Cabinet. A Hope to Overcome the Political Crisis 2016?* *University of Nottingham: Party Systems and Governments Observatory*, 2016, <http://whogoverns.eu/moldovas-new-cabinet-a-hope-to-overcome-the-political-crisis-in-2016> (24.09.2016).

³⁶ **Christophe B.**, *Understanding Politics in Georgia*. DEMSTAR Research Report, 22. Aarhus: University of Aarhus, 2004. Christophe 2004; **Nodia G., Pinto S. A.**, *The Political Landscape of Georgia. Political Parties: Achievements, Challenges and Prospects*. Delft: Eburon, 2006.

Աղյուսակ 1. Քարտաթղթի վարչական կարգավորման համակարգի սեռային և կարգիմաստի գործարկման տևորությունը 12 եվրոպական պետություններում

Պետություն	Ժողովրդավարության վարկանիշ	Կուսակցական համակարգի կառուցվածք			Ընդհանուր	Կարգիմաստի տևորություն (ամիսներով) Տևորությունն ըստ սեռային
		տարեթիվ	սեռակ	կշիռը կուսակցություն		
Մոլդովա	1992թ.՝ մասամբ ազատ, սակայն ոչ ԸԺ	1992թ.-ից	պլյուրալիստական	-	17.6	տեխնոկրատական (մինչև 1998թ. մայիս)՝ 28.3
	1995թ.-ից՝ մասամբ ազատ և ԸԺ	2001-2009 2010թ.-ից	գերիշխող պլյուրալիստական	Կոմկուս		անցումային/կրատակց. վրա էինմական՝ 17.6
	1992թ.՝ մասամբ ազատ, սակայն ոչ ԸԺ	1992թ.-ից	պլյուրալիստական	-	13.2	տեխնոկրատական (մինչև 2002թ. նոյեմբեր)՝ 12.8
	1994թ.՝ մասամբ ազատ և ԸԺ 2005թ.՝ ազատ 2010թ.-ից՝ մասամբ ազատ և ԸԺ	1992թ.-ից	պլյուրալիստական	-		անցումային/կրատակց. վրա էինմական՝ 13.6
Վրաստան	1992թ.՝ մասամբ ազատ և ԸԺ	1992 թ.-ից	պլյուրալիստական	-	15.9	տեխնոկրատական (մինչև 2003թ. նոյեմբեր)՝ 18
	2003թ.՝ մասամբ ազատ, սակայն ոչ ԸԺ	1995- 2003թթ.	գերիշխող	Քարտաթղթի կուսություն		անցումային/կրատակց. վրա էինմական՝ 14.3
	2004թ.՝ մասամբ ազատ և ԸԺ	2004-2011	գերիշխող	Միացյալ ազգային շարժում	12.1	անցումային/կրատակց. վրա էինմական՝ 9.5
	2008թ.՝ մասամբ ազատ, սակայն ոչ ԸԺ	2012 թ.-ից	գերիշխող	Կրոնցական երազանք		տեխնոկրատական (մինչև 1999թ. մայիս)՝ 15.2
Հայաստան	1992թ.՝ մասամբ ազատ, սակայն ոչ ԸԺ	1992թ.-ից	պլյուրալիստական	-	20.3	անցումային/կրատակց. վրա էինմական՝ 23.4
	1995թ.՝ մասամբ ազատ և ԸԺ 2000թ.՝ ոչ ազատ 2005թ.՝ մասամբ ազատ, սակայն ոչ ԸԺ	1992թ.-ից	պլյուրալիստական	-		անցումային/կրատակց. վրա էինմական՝ 23.4
	2009թ.՝ ոչ ազատ 2010թ.-ից՝ մասամբ ազատ, սակայն ոչ ԸԺ	1992թ.-ից	գերիշխող	ՀՀԿ		
	1992թ.՝ մասամբ ազատ, սակայն ոչ ԸԺ 1999թ.-ից՝ մասամբ ազատ և ԸԺ 2003թ.-ից՝ մասամբ ազատ, սակայն ոչ ԸԺ	2007թ.-ից	գերիշխող			

Աղյուսակ 1. Քաղաքական վարչակարգի որակը, կուսակցական համակարգի տեսակը և կարիներտի գործարկման տևողությունը 12 եվրասիական պետություններում

Ուսուստան	1992թ.՝ մտամբ ազատ, սակայն ոչ ԸՄ 1993թ.՝ մտամբ ազատ և ԸՄ 2004թ.-ից՝ ոչ ազատ	1992թ.-ից 2003թ.-ից	վյուրախոսողական հեղեմնիխոսողական	-	20.8	տեխնոկրատական
Ղազախստան	1992թ.՝ մտամբ ազատ, սակայն ոչ ԸՄ 1994թ.-ից՝ ոչ ազատ	1992թ.-ից 2004թ.-ից	վյուրախոսողական հեղեմնիխոսողական	-	33.6	տեխնոկրատական
	1992թ.՝ մտամբ ազատ, սակայն ոչ ԸՄ 1993թ.՝ ոչ ազատ	1995թ.-ից	հեղեմնիխոսողական	Ցեմի Ադրբեջան	•	տեխնոկրատական
	1997թ.՝ մտամբ ազատ, սակայն ոչ ԸՄ 2004թ.-ից՝ ոչ ազատ					
	Տաջիկստան	1992թ.՝ ոչ ազատ	1992թ.-ից 2000թ.-ից	վյուրախոսողական հեղեմնիխոսողական	-	44.4
1993թ.՝ ոչ ազատ 1996թ.՝ ոչ ազատ		1992թ.-ից	վյուրախոսողական	-	42.2	տեխնոկրատական
Թուրքմենստան	1992թ.-ից՝ ոչ ազատ	1992թ.-ից 2008թ.-ից	միակուսակցական համակարգ հեղեմնիխոսողական	Ղեկավարողական կուսակցություն	**	տեխնոկրատական
	1992թ.-ից՝ ոչ ազատ	1992թ.-ից	հեղեմնիխոսողական	ԼՂԿ	101.2	տեխնոկրատական

Ճորձվորակարության վարկանիշի գնահատումն իրականացվել է ըստ Freedom House-ի սովյալների
 *1996թ.-ից ի վեր վարչապետը չի փոխվել: **Կարիներտը գլխավորում է նախագահը՝ ստանց վարչապետի

2003թ. Վարդերի հեղափոխության արդյունքում տապալվեց գործող ռեժիմը, և Միխայիլ Սաակաշվիլու «Միացյալ ազգային շարժում» կուսակցությունը զբաղեցրեց գերիշխող դիրք՝ 2004թ. և 2008թ. գումարման խորհրդարաններում ստանալով սահմանադրական մեծամասնություն: 2012թ. ձևավորված «Վրացական երազանք» ընդդիմադիր դաշինքը ստացավ խորհրդարանական տեղերի 57 տոկոսը³⁷: Սակայն, հաջորդ՝ 2016թ. խորհրդարանական ընտրություններում դաշինքը ստացավ մանդատների ավելի քան 76 տոկոսը, ինչը ցույց տվեց որ մեկնարկել է իշխող կուսակցական համակարգի երրորդ փուլը:

1991-1998թթ. Հայաստանի կուսակցական համակարգը իշխող կուսակցական համակարգ դառնալու շեմին էր, սակայն «Հայոց համազգային շարժումը» (ՀՀՇ) այդպես էլ չձևավորեց խորհրդարանական մեծամասնություն: Կուսակցական համակարգի վերափոխումից հետո (1990-ական թթ. վերջ-2000-ական թթ. կեսեր) «Հայաստանի Հանրապետական կուսակցությունը» (ՀՀԿ) կայացավ որպես նոր իշխանության կուսակցություն: 2000 թ. կուսակցության առաջնորդը դարձավ վարչապետ, իսկ 2008թ. կուսակցության նախագահ Սերժ Սարգսյանը դարձավ երկրի երրորդ նախագահ: 1999թ. և 2003թ. Հայաստանի մասնատված խորհրդարանում մանդատների ամենախոշոր մասնաբաժինը ստանալուց հետո կուսակցությունը ձևավորեց մեծամասնություն՝ 2007թ., 2012թ., 2017թ. ընտրություններում կայանալով որպես իշխող կուսակցություն: Դիտորդները նշում են, որ Հայաստանի քաղաքական համակարգն ավելի մոտ է Վրաստանի քաղաքական համակարգին և ավելի բաց ու մրցունակ է, քան Ադրբեջանի քաղաքական համակարգը³⁸:

³⁷ **Berglund C.**, Georgia between Dominant-Power Politics, Feckless Pluralism, and Democracy. *Demokratizatsiya: The Journal of Post-Soviet Democratization*, 2014, **22**, 3, 445–470; **Nakashidze M.**, Semi-Presidentialism in Georgia. *Elgie R., Moestrup S. (eds.), Semi-Presidentialism in the Caucasus and Central Asia*, Palgrave Macmillan, 2016, pp. 119–142.

³⁸ **Way L.**, State Power and Autocratic Stability. Armenia and Georgia Compared, *Wooden A. F. and Stefes C. H. (eds.), The Politics of Transition in Central Asia and the Caucasus*. London: Routledge, 2009, pp. 103–123; **Hale H. E.**, 25 Years After The USSR. What's Gone Wrong? *Journal of Democracy* **27**, 3, 24–35, 2016; **Markarov A.**, Semi-Presidentialism in Armenia. *Elgie R., Moestrup S. (eds.), Semi-*

Պյուրալիստական կուսակցական համակարգեր: Ուկրաինայում 1994 թվականից շուրջ 150 կուսակցություններ առնվազն մեկ անգամ մասնակցել են յոթ համապետական ընտրությունների, սակայն դրանցից միայն 38-ն են ստացել մանդատներ, որից 22-ը՝ դաշինքներին կամ ընտրական բլոկերին միանալու ճանապարհով³⁹: Ուկրաինայի կուսակցական համակարգը մշտապես եղել է պյուրալիստական՝ բարձր անկայունության տարրերով⁴⁰: Նույնիսկ ամենաուժեղ կուսակցությունը չկարողացավ ստանալ խորհրդարանական տեղերի մեծամասնություն՝ ժամանակ առ ժամանակ գերազանցելով իր ամենամոտ մրցակցին միայն աննշան առավելությամբ: Չնայած Վիկտոր Յուշչենկոյի «Մեր Ուկրաինան», Վիկտոր Յանուկովիչի «Տարածաշրջանների կուսակցությունը» և «Պետրո Պորոշենկոյի դաշինքը» համապատասխանում են իշխանության կուսակցության սահմանմանը, այդուհանդերձ դրանցից ոչ մեկին երբևէ չի հաջողվել ձևավորել բացարձակ մեծամասնություն երկու հաջորդական օրենսդրական ժամկետներում և հաստատել լիակատար գերիշխանություն:

Դրոգստանում բավական երկար ժամանակ կուսակցական քաղաքական գործիչներն ավելի շատ բացառություն էին, քան օրինաչափ երևույթ: Կուսակցական համակարգը զարգացում ապրեց միայն 2000-ական թթ. կեսերին՝ նախագահ Սաքար Ակաևի օրոք: Վերջինս փորձեց ձևավորել իշխանության կուսակցություն՝ «Միացյալ Ռուսաստանի» և «Նուր Օթանի» մոդելների օրինակով: Սակայն, 2005թ. սկզբին տեղի ունեցած Կակաչների հեղափոխության արդյունքում այդ փորձը ձախողվեց⁴¹: Կուրմանբեկ Բակիևի նախաձեռնած հաջորդ փորձը սկզբնական շրջանում հաջողություն ունեցավ: 2007թ. խորհրդարանական ընտրություններին նոր իշխանության կուսակցությունը ստացավ տեղերի 80 տոկոսը, սակայն տապալվեց

Presidentialism in the Caucasus and Central Asia, Palgrave Macmillan, 2016, pp. 61–90.

³⁹ Fedorenko K., et al, Op. cit.

⁴⁰ Rybiy O., Party System Institutionalization in Ukraine, *Demokratizatsiya*, 2013, 21, 3, 401–423.

⁴¹ Elebaeva A., Pukhova M., Political Transformations in Kyrgyzstan (1991–2006), *Central Asia and the Caucasus*, 2007, 2, 44, 67–78.

երեք տարի անց՝ մեկ այլ զանգվածային մոբիլիզացման արդյունքում⁴²: 2010թ. նոր սահմանադրության (ըստ որի պատգամավորների թիվը սահմանափակվեց մինչև 54 տոկոս յուրաքանչյուր կուսակցության համար) և 2011թ. նոր ընտրական օրենքի ընդունումից հետո 2014թ. օգոստոսին երեք միլիոնից պակաս ընտրագնազված ունեցող երկրում հաստատվեց պյուրալիստական կուսակցական համակարգ՝ պաշտոնապես գրանցված 194 կուսակցություններով: Երկու խորհրդարանական ընտրությունների արդյունքում 2010թ. ձևավորվեց հինգ կուսակցությունների միջև գրեթե հավասարաչափ բաշխված տեղերով խորհրդարան⁴³, իսկ 2015թ.՝ ավելի ուժեղ իշխանություն (38 խորհրդարանական տեղ)՝ շրջապատված հինգ ընդդիմադիր կուսակցություններով, որոնք զբաղեցնում էին 11-28 տեղ⁴⁴:

Չնականորեն Բելառուսը նույնպես ունի պյուրալիստական կուսակցական համակարգ: Սակայն իրականում այդ պյուրալիզմն ամբողջովին կեղծ է և միայն արտացոլում է իշխանության կուսակցության բացակայությունը: Անկայուն կուսակցական համակարգերում կան արբանյակային կուսակցություններից մինչև ոչ համակարգային ընդդիմություն: Սակայն դրանք էական դերակատարներ չեն նույնիսկ ընտրական գործընթացներում, որտեղ թեկնածուների մեծ մասն անկուսակցական է⁴⁵: Ներկայացուցիչների պալատի վերջին ընտրություններում (2016թ. սեպտեմբեր) 94 անկախ թեկնածուներ հաջողության հասան, որոնցից մեկը համարվում էր ընդդիմության ներկայացուցիչ:

⁴² **Marat E.**, Kyrgyzstan: A Parliamentary System Based on Inter-Elite Consensus. *Demokratizatsiya*, 2012, **20** (4), 325–344; **Cummings S., et al**, State, Regime, and Government in the Kyrgyz Republic (1991–2010): Disaggregating a Relationship, *East European Politics*, 2013, **29**, 4, 443–460.

⁴³ **Huskey E., Hill D.**, The 2010 Referendum and Parliamentary Elections in Kyrgyzstan, *Electoral Studies*, 2011, **30**, 4, 876–879.

⁴⁴ **Juraev S.**, The Evolving Role of Political Parties in Kyrgyz Politics, *Marlene L., Johan E.I. (eds.): Kyrgyzstan beyond 'Democracy Island' and 'Failing State'. Social and Political Changes in a Post-Soviet Society*, Lanham: Lexington Books, 2015, pp. 21–38; **Fumagalli M.**, Semi-Presidentialism in Kyrgyzstan, *Elgie R., Moestrup S. (eds.), Semi-Presidentialism in the Caucasus and Central Asia*, London: Palgrave Macmillan, 2016, pp. 173–206.

⁴⁵ **Charnysh V., Kulakevich T.**, Belarusian Political Parties: Organizational Structures and Practices, <http://charnysh.net/documents/Parties.pdf>, (23.02.2017); **Glavachek P.**, Politicheskie partii i obshchestvo v sovremennoj Belarusi (in Russian), *Polis*, 2010, 2, 64–74.

Խորհրդարանական տեղերի համար պայքարում էին ինը կուսակցություն: Դրանցից հինգը ստացան ընդհանուր թվով 16 մանդատ, որից 14-ը՝ իշխանության ներկայացուցիչ, իսկ «կառուցողական» և ոչ համակարգային ընդդիմությունը՝ յուրաքանչյուրը մեկական տեղ⁴⁶: Չնայած մանդատների թիվը փոքր էր, նախորդ գումարման խորհրդարանների համեմատ մասնաբաժինը կրկնապատկվել էր:

2.3. Կուսակցական պայքարի կառուցվածքը Եվրասիայում

Ամփոփելով վերջին քառորդ դարը՝ կարելի է նշել, որ ինստիտուցիոնալացման բացը, մասնատվածությունը և կուսակցական բարձր անկայունությունն այն հիմնական գործոններն են, որոնք խաթարում են պլուրալիստական կամ գերիշխող կուսակցական համակարգերի զարգացումը Հայաստանում, Վրաստանում, Դըրդըստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: Ի հակադրություն դրան, հեգեմոնիստական կուսակցական համակարգերն այլ երկրներում ժամանակի ընթացքում «սառեցվել» են՝ պտտվելով կայացած իշխող համակարգի շուրջ: Վերջինիս բնորոշ են ոչ ինստիտուցիոնալացված և արբանյակային կամ ընդդիմադիր անկայուն կուսակցությունները:

Հարկ է նշել, որ բոլոր դեպքերում կուսակցություններն ունեն կազմակերպվածության ցածր մակարդակ, անձնավորված են և ծրագրային առումով՝ թույլ: Ընդհանուր առմամբ, պլուրալիստական/պլուրալիստական-իշխող և հեգեմոնիստական կուսակցական համակարգերի առանցքային տարբերությունը մրցունակության աստիճանի, այլ ոչ՝ կուսակցությունների՝ որպես կազմակերպությունների, բնույթի մեջ է: Ուստի, զարմանալի չէ, որ միջկուսակցական մրցակցության տարբեր օրինաչափություններ համապատասխանում են քաղաքական վարչակարգերի ժողովրդավարական որակին (տես աղյուսակ 1-ի առաջին սյունը): Ըստ «Ֆրիդըմ Հաուսի» գնահատականի, բոլոր ավտորիտար վարչակարգերն ունեն կայուն հեգեմոնիստական կուսակցական համակարգեր: Թուրքմենստանը և Ուզբեկըս-

⁴⁶ CEC: Soobshchenie Tsentral'noi Komissii Respubliki Belarus' po vyboram i provedeniyu respublikanskikh referendumov ob itogakh vyborov deputatov Palaty predstavitelei Natsional'nogo sobraniya Respubliki Belarus' shestogo sozyva (In Russian), <http://rec.gov.by/ru/Elections-PPNS6-Gol.> (12.11. 2016).

տանը՝ ազատության ամենացածր ցուցանիշն ունեցող պետությունները, ներկայացնում են կեղծ բազմակարծության ծայրահեղ տեսակը: Մինչդեռ, ժողովրդավարության նվազագույն չափանիշների բավարարող Մոլդովան, Ուկրաինան, Վրաստանը կամ հարաբերականորեն մրցունակ ռեժիմ ունեցող Ղրղզստանը և Հայաստանը երբևէ չեն ունեցել հեգեմոնիստական կուսակցական համակարգեր: Դրանք պլյուրալիստական են՝ գերիշխանության որոշ տարրերով⁴⁷:

Այդուհանդերձ, ինդիքը ոչ թե կուսակցականն պլյուրալիզմն է՝ որպես այդպիսին, այլ իշխանության կուսակցության վիճակը: Դա այն հիմնական գործոնն է, որը ցույց է տալիս իրական քաղաքական մրցակցության առկայությունը կամ բացակայությունը՝ ներկայացված ժողովրդավարության ցուցանիշներով: Դա հատկապես ակնհայտ է «պլյուրալիստական» Բելառուսի եզակի դեպքի դիտարկման, ինչպես նաև տարածաշրջանի երկրների կուսակցական համակարգերի համեմատության ժամանակ: Ավելի մրցունակ երկրներում վերջին քսանհինգ տարում տեղի են ունեցել կուսակցական համակարգի մեկից երեք խոշոր հեղաշրջումներ: Դա պայմանավորված էր իշխանության կուսակցությունների տապալմամբ, որոնք չկարողացան կայունանալ երկարաժամկետ հեռանկարում: Վրաստանում (2003թ.), Ուկրաինայում (2014թ.) և Ղրղզստանում (2005թ., 2010թ.) դրա պատճառը զանգվածային մոբիլիզացումն էր, իսկ Մոլդովայում (2009թ.) և Վրաստանում (2012թ.)՝ ընտրություններում կրած պարտությունը: Մինչդեռ, տարածաշրջանի ավտորիտար երկրների իշխանության կուսակցությունները վերածվել են կայացած իշխող կուսակցությունների:

Առաջին հայացքից կուսակցական համակարգերի կառուցվածքային տարբերություններն արտացոլում են այլընտրանքային քաղաքական ուղիները, որոնք հանգեցնում են կամ տևական ու անավարտ ժողովրդավարացման կամ կայացած ավտորիտարիզմի ձևավորման: Այդ զարգացումներն ավելի նպատակահարմար է մեկնաբանել «պատրոնաժային քաղաքականության» ցանցային առանձնահատկությունների տեսանկյունից⁴⁸: Կայուն հեգեմոնիստական համակարգերը,

⁴⁷ Freedom in the World 2016, Freedom House, <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2016> (17.10.2016).

⁴⁸ Hale, H. E., Patronal..., Op. cit.; Hale, H. E., 25 Years ..., Op. cit.

որոնք ունեն անձեռնմխելի իշխանության կուսակցություններ, Հեյլը բնորոշում է որպես «միաբուրգ համակարգեր»: Դրանց բնորոշ է համընդգրկուն, համապետական նախագահական իշխանության ցանցային համակարգ, որում քաղաքական մրցակցությունը չափազանց թույլ է կամ առհասարակ բացակայում է: Իշխող կուսակցական համակարգերի դեպքում նախագահական բուրգը պակաս հզոր է ու կայացած և բախվում է այլ ցանցերի առաջադրած խնդիրներին: Պլուրալիստական կուսակցական համակարգերում իշխանության կուսակցությունը պակաս համընդգրկուն է և ժամանակ առ ժամանակ ստիպված է մրցել այլ ցանցային բուրգերի հետ: Միջցանցային փոխազդեցություններում կուսակցությունները առանցքային դերակատարներ են ընտրական ասպարեզում էլիտան համակարգելու գործում:

Պատրոնաժային քաղաքականության ժամանակ առաջանում են վարչակարգի ցիկլեր, որոնք ձևավորվում են ինտեգրված ուժային բուրգերի առաջացման, դրանց պարբերական անկման, վերադասավորման, նոր «միաուժ բուրգով» փոխարինման կամ մրցակից ցանցերի միջև սուր մրցակցության արդյունքում⁴⁹: Վարչակարգի ճգնաժամերը և անկումները, որոնց արդյունքում փոխվում է ցանցային համակարգի կառուցվածքը, ազդում են կուսակցության զարգացման և կուսակցական համակարգերի վերաձևավորման վրա: Ավտորիտար երկրներում մինչ այսօր պահպանվել են առաջին հետխորհրդային միաբուրգ համակարգերը՝ 2000-ականներին վերաձևավորվելով կայուն հեգեմոնիստական կուսակցական համակարգերի: Ի հակադրություն դրան, Եվրասիայի ավելի մրցունակ վարչակարգերն ունեն անկայուն կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Կուսակցական համակարգերի տարատեսակների միջև տատանումներն արտացոլում են իշխանության կուսակցությունների փոփոխությունները և ուժային բուրգերի վերակառուցումը: Ուստի, ներկայացված էմպիրիկ տվյալները կարող են մեկնաբանվել վարչակարգերի ցիկլային տեսության շրջանակ-ներում: Ներկայումս, երբ Հայաստանը կառավարման համակարգի փոփոխության շեմին է, որն ուղեկցվում է կիսախորհրդարանական համակարգից խորհրդարանական համակարգին անցմամբ, երկրի միաբուրգ համակարգը հայտնվել է ուժեղ ճնշման

⁴⁹ Hale, H. E., Patronal..., Op. cit.

տակ: Դրոգստանում և Մոլդովայում մի քանի «բուրգ-կուսակցություններ» մրցակցում են քիչ թե շատ հավասար պայմաններում: Վրաստանում և Ուկրաինայում միմյանց հետ մրցում են երկու խոշոր քաղաքական դաշինքներ և մի քանի փոքր կուսակցություններ: Չնայած մրցակից դաշինքներն ավելի փոքր են և թույլ, քան ներկայիս իշխանության կուսակցությունը, կայանալիք ընտրություններում հնարավոր է նաև իշխանափոխություն:

3. Կուսակցությունների դերակատարությունն օրենսդիր և գործադիր համակարգերում

3.1. Օրենսդիր կուսակցություններ

Արևմտյան ժողովրդավարություններում կուսակցությունները ոչ միայն առանցքային դերակատարներ են ընտրական քաղաքականության մեջ, այլև օրենսդիր և գործադիր համակարգերում: Խորհրդարանները բարդ ինստիտուտներ են, որոնք կազմված են երկու տարբեր «խողովակներից»՝ հանձնաժողովներ և խորհրդարանական կուսակցական խմբեր, որոնք հաճախ կոչվում են «ակուրներ» կամ խմբակցություններ: Դրանք խաչվում են մի քանի ձևով: Մի կողմից, հանձնաժողովները կազմված են անդամներից, որոնց թեկնածությունն առաջադրում են կուսակցական խմբերը, դրանք տրամադրում են հարթակ, որտեղ կուսակցությունները քննարկում են քաղաքական հարցեր և բանավիճում միմյանց հետ⁵⁰: Մյուս կողմից, խորհրդարանական կուսակցական խմբերը միավորում են նույն (արտախորհրդարանական) կուսակցության պատգամավորների: Դրանք համախմբում են քաղաքական և գաղափարական շահերը՝ համընդհանուր ընտրական իրավունքը կապելով քաղաքական կազմակերպությունների և ազգային խորհրդարանների հետ: Ավելին, դրանք երաշխավորում են ժողովրդավարական համակարգի լեգիտիմությունը՝ ապահովելով էլիտայի հաշվետվողականությունը ընտրազանգվածի առջև: Խորհրդարանական ժողովրդավարություններում կուսակցական խմբերը նպաստում են համակարգի

⁵⁰ **Olson D. M.**, *Democratic Legislative Institutions. A Comparative View*. Armonk, N.Y.: M.E. Sharpe, 1994.

կայունությանն ու արդյունավետությանը, քանզի դրանք ամուր հիմք են ստեղծում կառավարության ձևավորման և քաղաքականության մշակման համար⁵¹: Իսկ հանձնաժողովներն ամրապնդում են տեխնիկական փորձաքննությունը և պրոֆեսիոնալիզմը օրենսդրության մեջ և ներգրավված են քաղաքականության տարբեր ոլորտներում⁵²: Վերոնշյալի հիման վրա կուսումնասիրվեն եվրասիական պետությունների կուսակցությունների, մասնավորապես՝ դրանց ստորին պալատների կառուցվածքը⁵³:

Անկուսակցական խորհրդարաններ: Խորհրդարանական կուսակցական խմբերի ինստիտուցիոնալացումը որոշ երկրներում երկար և ձգձգված գործընթաց էր: Այն միաժամանակ արտացոլում և խթանում էր երկրի կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացումն ավելի լայն ընտրական դաշտում: Ներկայումս եվրասիական երկրների բոլոր ազգային խորհրդարանները, բացի երեքից, կազմված են խորհրդարանական կուսակցական խմբերից և հանձնաժողովներից: Եվրասիական երկրների ազգային խորհրդարանների կազմի վերաբերյալ 2015թ. մայիսին իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն Բելառուսի, Թուրքմենստանի և Ադրբեջանի օրենսդրական համակարգերն են առանաձնանում իրենց անկուսակցական և հանձնաժողովների վրա կենտրոնացած բնույթով, ինչը հիշեցնում է Խորհրդային Միության Գերագույն Խորհուրդը: Ադրբեջանում խորհրդարանական կուսակցական խմբերի ձևավորումն օրենսդրությամբ արգելված չէ: Այդուհանդերձ, նվազագույնը քսան տոկոս մանդատ ունեցողների թվի պատճառով տեխնիկական խոչընդոտները շատ են, իսկ միավորվելու խթանը՝ փոքր: Խորհրդարանական խմբերը չունեն այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են,

⁵¹ **Heidar K., Koole R. A.**, Approaches to the Study of Parliamentary Party Groups, *Heidar K., Koole R. A. (eds.), Parliamentary Party Groups in European Democracies. Political Parties behind Closed Doors*, London: Routledge, 2000, pp. 4-22.

⁵² **Ostrow J. M.**, Comparing Post-Soviet Legislatures. A Theory of Institutional Design and Political Conflict. Columbus: Ohio State University, 2000.

⁵³ Ռուսաստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Բելառուսը և Տաջիկստանն ունեն երկպալատ խորհրդարաններ, որոնց վերին պալատները կազմակերպված չեն ըստ կուսակցական գծերի:

օրինակ, պետական ռեսուրսներին և միջոցներին հասանելիությունը կամ խորհրդարանի կառավարման մարմիններում ներկայացվածությունը: Միակ կուսակցությունը, որը բավարարում է ֆորմալ պահանջները, «Յենի Ադրբեջանն» է, սակայն այն հրաժարվել է կազմավորել խորհրդարանական կուսակցական խմբակցության⁵⁴: Նույնը բնորոշ է նաև Տաջիկստանին, որտեղ միայն իշխանական կուսակցությունն է հաղթահարում հինգ մանդատի նվազագույն շեմը, սակայն կազմակերպված է որպես խմբակցություն:

Իշխանության կուսակցությունների գերիշխանությամբ բազմակուսակցական խորհրդարաններ: Տարածաշրջանի բոլոր մնացած երկրներն ունեն այնպիսի խորհրդարաններ, որոնք ձևավորված են ըստ կուսակցական գծերի և ունեն պաշտոնապես ճանաչված խորհրդարանական կուսակցական խմբակցություններ (խմբեր): Այդուհանդերձ, դրանց միջև կան որոշ տարբերություններ: Ռուսաստանի, Ղազախստանի և Ուզբեկստանի խորհրդարաններում բոլոր մանդատ ունեցողները 3-ից 4 խորհրդարանական կուսակցական խմբի անդամ են⁵⁵:

Ռուսաստանում խորհրդային համակարգի հետ կապերը խզելու որոշումն ընդունվեց 1993թ. վերջին՝ առաջին Դումայի ձևավորումից հետո⁵⁶: Դրա արդյունքում սկսվեց կուսակցությունների ձևավորման գործընթացը և մեծացավ գործադիր իշխանության հետ բանակցելու և փոխհամաձայնության գալու խորհրդարանի կարողությունը: Հատկանշական է, որ գործընթացը մեկնարկել էր 1990-ականներին, երբ խորհրդարանական կուսակցական խմբերը բավարար չափով կազմակերպված չէին և խորհրդարանում չկային կայուն մեծամասնական դաշինքներ⁵⁷: 2003թ. հեգեմոնիստական կուսակցական համակարգերի ի հայտ գալուց հետո, Դուման անցում կատարեց

⁵⁴ **Alieva L.**, Political Party Regulation in the Republic of Azerbaijan. Baku: Center for National and International Studies, 2012.

⁵⁵ Վերջին երկու երկրների խորհրդարաններում կան նաև անկուսակցական խմբեր, որոնք չեն մասնակցում համապետական ընտրություններին:

⁵⁶ **Haspel M.**, Should Party in Parliament Be Weak or Strong? The Rules Debate in the Russian State Duma, *Journal of Communist Studies and Transition Politics*, 1998, **14**, 1-2, 178-200.

⁵⁷ **Chaisty P.**, Party Cohesion and Policy-Making in Russia, *Party Politics*, 2005, **11**, 3, 299-318; **Remington T. F.**, The Russian Federal Assembly, 1994-2004, *Journal of Legislative Studies*, 2007, **13**, 1, 121-141.

ուժեղ մեծամասնական համակարգի: Ինչպես մյուս երկու երկրներում, բոլոր գրանցված կուսակցություններն ունեն կայուն կազմ և խիստ կազմակերպված ընտրական վարքագիծ⁵⁸: 1990-ականներին կուսակցությունների փոփոխությունը հաճախակի երևույթ էր Ռուսաստանում⁵⁹, սակայն դա վերացավ 2003թ.՝ նոր կանոնների ընդունումից հետո: Կազմակերպական փոփոխությունների արդյունքում «Միացյալ Ռուսաստանը» վերահսկողություն սահմանեց խորհրդարանի նախագահող և օրակարգը սահմանող Դումայի խորհրդի վրա⁶⁰:

Հայաստանի Ազգային ժողովի ներքին կառուցվածքը բավական մոտ է այդ սխեմային: Այն կազմված է վեց կայուն խորհրդարանական խմբակցություններից և յոթ անկախ պատգամավորներից (2016թ. սեպտեմբերի տվյալներով): Խորհրդարանում իշխող կուսակցության գոյությունը զգալի ազդեցություն ունի օրենսդիր համակարգի ընդհանուր կայունության համար: Հատկանշական է, որ 2000-ական թթ. Մոլդովայի համակարգը բավական մոտ էր այս մոդելին, չնայած նրան, որ այն խորհրդարանական հանրապետություն էր՝ թույլ, խորհրդարանի կողմից ընտրվող նախագահով: Այն ամբողջ ընթացքում, երբ «Կոմունիստական կուսակցությունն» ուներ իշխող դիրք և ձևավորվել էր խոշոր և կարգապահ խորհրդարանական կուսակցական խումբ, նախագահ Վլադիմիր Վորոնինը կառավարում էր երկիրը ուղղահայաց գործադիր իշխանության մոդելով⁶¹: Այդուհանդերձ, Մոլդովայի Հանրապետության կոմունիստական կուսակցության՝ որպես իշխանության կուսակցության, տապալմամբ, իրավիճակը հիմնովին փոխվեց:

Պյուրալիստական բազմակուսակցական խորհրդարաններ: Որոշ երկրների խորհրդարանների կառուցվածքն ավելի բարդ է: Դրանք

⁵⁸ **Remington T.**, Patronage and Power: Russia's Dominant Party Regime, *Politische Vierteljahresschrift*, 2008, 49, 2, 213–228.

⁵⁹ **Mershon C., Shvetsova O.**, Parliamentary Cycles and Party Switching in Legislatures. *Comparative Political Studies*, 2008, 41, 1, 99–127.

⁶⁰ **Chaisty P.**, The Federal Assembly and the Power Vertical, *Graeme J. Gill and James Young (eds.)*, *Routledge Handbook of Russian Politics and Society*, London: Routledge, 2012, pp. 92–101.

⁶¹ **Crowther W.**, Second Decade, Second Chance? Parliament, Politics and Democratic Aspiration in Russia, Ukraine and Moldova, *Olson D., Ilonszki G. (eds.)*: *Post-Communist Parliament. Change and Stability in the Second Decade*, London: Routledge, 2012, pp. 32–56; **Hale H. E.**, Patronal... Op. cit., Ch. 10.

կազմված են երկու շերտից՝ խորհրդարանական կուսակցություններ և միջկուսակցական դաշինքներ: Վրաստանի խորհրդարանում, առաջին մակարդակում, կան տասներկու խորհրդարանական խմբեր: Երկրորդ մակարդակում, վեց խմբակցություն կազմում են մեծամասնություն, չորսը՝ փոքրամասնություն (2016թ. սեպտեմբերի տվյալներով): Երկու խմբակցություններն էլ ունեն իրենց ենթակառուցվածքը և ռեսուրսները: Չնայած խորհրդարանը բաժանված է իշխող կոալիցիայի և ընդդիմության միջև, ողջ օրենսդրական շրջանում (2012-2016թթ.) տեղի են ունեցել որոշ վերադասավորումներ՝ ինչպես առանձին կուսակցությունների, այնպես էլ դաշինքների շրջանակում: 2016թ. խորհրդարանական ընտրություններից հետո Վրաստանը դարձավ տարածաշրջանի երրորդ երկիրը, որտեղ ինչպես Ռուսաստանում և Ղազախստանում, նախագահամետ խորհրդարանական կուսակցական խմբերն ունեն ձայների առավելագույն մեծամասնություն (խորհրդարանական տեղերի երեք քառորդից ավելին): Հետագա զարգացումները ցույց կտան, թե արդյոք դա կվերացնի խորհրդարանի կառուցվածքային անկայունությունը:

Ղրղզստանում և Ուկրաինայում թույլատրվում է ներխմբային դաշինքների ձևավորումը՝ կառավարությանն աջակցելու կամ այլընտրանք ստեղծելու համար: Երկու երկրների խորհրդարաններն ունեն ճկուն, եթե ոչ անկայուն կառուցվածք: Դա ստեղծում է մրցակցության բարձր մակարդակ էլիտայի խմբերի միջև, որոնք համակարգում կամ կազմալուծում են մեծամասնական դաշինքները⁶²: Ղրղզստանի հինգերորդ գումարման խորհրդարանին (2010-2015թթ.) բնորոշ էին կուսակցական պատկանելության փոփոխության զգալի դեպքեր, խորհրդարանի մեծամասնության կազմում վերադասավորումներ, ինչպես նաև երեք նոր խմբերի ձևավորում՝ գոյություն ունեցող հինգ խմբակցությունների կողքին⁶³: Ամբողջ հետխորհրդային շրջանում Ուկրաինայի խորհրդարանին բնորոշ էր խիստ հակասական ֆրակցիոն քաղաքականություն՝ անկայուն խորհրդարանական կուսակցական խմբերով⁶⁴: 2014թ. հոկտեմբերին ձևավորված ներկայիս խորհրդարանը կազմված է

⁶² Marat E., Op. cit.

⁶³ Juraev S., Op. cit.

⁶⁴ Crowther W., Op. cit.

ույթ խմբակցություններից և քառասունվեց անկախ թեկնածուներից: Խորհրդարանի ձևավորումից երկու տարի անց իշխող կոալիցիան կորցրեց երեք խորհրդարանական կուսակցական խմբերի աջակցությունն՝ ավելի ուշ ստանալով մյուս երկուսի աջակցությունը՝ նոր կառավարություն ձևավորելու համար: Ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում կուսակցությունների փոփոխություններ, ինչը հատկապես զգալի է 2004թ. հետո⁶⁵: Ներկայումս Սոլդովայի խորհրդարանը կազմված է հինգ խմբակցությունից, որոնց կազմն անկայուն է: Գլխավոր ձախողումը տեղի ունեցավ 2016թ. սկզբին, երբ կոմունիստական խմբակցության քսան անդամներից տասնչորսը դարձան անկախ պատգամավորներ, իսկ Լիբերալ-դեմոկրատական խմբակցությունը կիսով չափ կրճատվեց⁶⁶:

Ամփոփելով, կարելի է նշել, որ Վրաստանի, Ղրղզստանի, Ուկրաինայի և Սոլդովայի (Սոլդովայի Հանրապետության կոմունիստական կուսակցությանը հաջորդած գումարումներում) խորհրդարաններին բնորոշ են ոչ միայն պլյուրալիստական կուսակցական համակարգերի թույլ ինստիտուցիոնալացում, այլև կուսակցական համակարգի մասնատվածության և բևեռացման բարձր մակարդակ: Այդ խորհրդարանների ներքին կառուցվածքն ունի թույլ կապակցվածություն: Խորհրդարանական կուսակցական խմբերն անկայուն են, իսկ կուսակցական կարգապահության աստիճանն ավելի ցածր, քան այն երկրների խորհրդարանների դեպքում, որոնք իշխանության կուսակցության անվերապահ վերահսկողության ներքո են: Պլյուրալիստական բազմակուսակցական խորհրդարանի մեկ այլ կարևոր առանձնահատկություն է գործադիր իշխանությունից դրա ինստիտուցիոնալ ինքնավարության հարաբերականորեն բարձր մակարդակը: Տաջիկստանի⁶⁷, Ուզբեկստանի⁶⁸ և Ռուսաստանի⁶⁹ խորհրդարանները վերահսկվող են: Մինչդեռ նույնը չի կարելի ասել պլյուրալիստական երկրների

⁶⁵ **Thames F. C.**, Searching for the Electoral Connection. Parliamentary Party Switching in the Ukrainian Rada, 1998-2002, *Legislative Studies Quarterly*, 2007, 32, 223-256.

⁶⁶ **Saran V.**, Op. cit.

⁶⁷ **Mardon M.**, Neodnoznachnaya..., Op. cit.

⁶⁸ **Tolipov F.**, Democratic Structuralizing in Uzbekistan. The Multiparty System and the Opposition, *Central Asia and the Caucasus*, 2011, 12, 1, 132-140.

⁶⁹ **Remington T. F.**, Op. cit., p. 123; **Roberts S. P.**, Op. cit., p. 122:

խորհրդարանների մասին, այդ թվում՝ Հայաստանի: Սակայն այս խմբի նույնիսկ ամենացայտուն դեպքերը՝ Ուկրաինան և Մոլդովան, ունեն ավելի պակաս ինքնավարություն գործադիրից, քան Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի իրենց գործընկերները⁷⁰:

3.2. Տեխնոկրատական և կուսակցական կաբինետներ

Արևմտյան ժողովրդավարությունների գործադիր համակարգերին հատուկ է կուսակցական մասնակցության երկու օրինաչափություն: Խորհրդարանական կուսակցությունները գրեթե մասնակցություն չունեն նախագահի ընտրության, ինչպես նաև նախագահական համակարգերում կառավարության կազմի ձևավորման գործում, սակայն առանցքային են խորհրդարանական և կիսանախագահական կառավարման համակարգերում: Քանի որ այդ սահմանադրական ձևաչափերում կառավարությունը հաշվետու է խորհրդարանին և կախված է խորհրդարանական մեծամասնության շարունակական աջակցությունից, կուսակցությունները կարևոր նշանակություն ունեն կառավարության ձևավորման և պահպանման համար: Այդ համատեքստում հետազոտողները կուսակցական կառավարությունները դիտարկում են որպես սահմանադրական նորմ այն եվրասիական երկրներում, որոնք ֆորմալ առումով խորհրդարանական են (Մոլդովա, 2000-2016թթ.) կամ կիսանախագահական (Հայաստան, Բելառուս, 2004 թվականից Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, 1994-2000թթ.)՝ Մոլդովա, 2016 թվականից՝ Ռուսաստան և Ուկրաինա): Սակայն, իրական պատկերն ավելի խճճված է:

Անկուսակցական կառավարություններ: Թուրքմենստանը⁷¹, Ուզբեկստանը և Տաջիկստանը նախագահական կառավարություններ են: Նախագահն ընտրում է վարչապետին և կառավարության անդամներին, իսկ խորհրդարանը պոստ ֆակտում հաստատում է այդ որոշումը: Հատկանշական է, որ սա բնորոշ է նաև ֆորմալ առումով կիսանախագահական Ադրբեջանին, Բելառուսին, Ղազախստանին և

⁷⁰ **Olson D. M., Ilonszki G.**, Two Decades of Divergent Post-Communist Parliamentary Development, *Journal of Legislative Studies*, 2011, 17, 2, 234–255.

⁷¹ Ինչպես Վրաստանում մինչև 2004թ., այս դեպքում ևս նախագահը միաժամանակ նաև կառավարության գլուխն է:

Ռուսաստանին: Մինչ այսօր այս երկրներում չեն ձևավորվել կուսակցական կառավարություններ: Ինչպես մաքուր նախագահական երկրներում, կառավարությունները «տեխնոկրատական կաբինետներ» են: Դրանք ձևավորվել են առանց խորհրդարանական կուսակցությունների արդյունավետ մասնակցության և/կամ կազմված են հիսուն տոկոսից ավել անկուսակցական նախարարներից և վարչապետի⁷²: Այդուհանդերձ, կուսակցական կառավարությունների ձևավորումը սահմանադրորեն արգելված չէ այդ երկրներում: Բոլոր չորս երկրներում խորհրդարանը պաշտոնապես հաստատում է վարչապետին, որի թեկնածությունն առաջադրում է նախագահը, իսկ կառավարությունը պատասխանատու է միաժամանակ նախագահի և խորհրդարանի առջև: 2007թ. Ղազախստանում և 2011թ. Ուզբեկստանում տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում խորհրդարանական կուսակցություններին շնորհվեց ֆորմալ դերակատարություն կառավարության ձևավորման գործում: Սակայն, այդ, ինչպես նաև լուծարման վերջնական որոշումն ընդունում է երկրի նախագահը, ով վերահսկում է խորհրդարանը իշխանության կուսակցության միջոցով:

Կուսակցական կառավարություններ: Հինգ ավելի մրցունակ վարչակարգերում, որոնք ունեն պյուրալիստական կամ իշխող կուսակցական համակարգեր և պյուրալիստական բազմակուսակցական խորհրդարաններ, կառավարությունները հիմնված են կուսակցական դաշինքների վրա: Այդուհանդերձ, մաքուր կուսակցական կառավարություններն ունեն նոր ծագում և ձևավորվել են անցումային փուլից հետո, երբ դե ֆակտո կուսակցական կառավարությունները գլխավորում էին անկուսակցական վարչապետներ կամ կառավարության կազմի կեսից ավելին անկուսակցական նախարարներ էին կամ դե ֆակտո նախագահական կառավարությունները վայելում էին իշխող կուսակցության աջակցությունը (տես աղյուսակ 1-ի վերջին սյունը):

Մինչև 1990-ականների վերջը Հայաստանում գործում էին բացառապես տեխնոկրատական կառավարություններ: Առաջին կառավարությունը, որը վայելում էր խորհրդարանական մեծամաս-

⁷² **Schleiter P., Morgan-Jones E.**, Who's in Charge? Presidents, Assemblies, and the Political Control of Semipresidential Cabinet, *Comparative Political Studies*, 2010, **43**, 11, 1415–41.

նության աջակցությունը, ձևավորվեց 1999թ. հունիսին: Սակայն, մինչև 2003թ. հունիսը նախարարների զգալի մեծամասնությունը որևէ կուսակցության գրանցված անդամ չէր⁷³: Այդ ընթացքում բոլոր կառավարություններն ապավինում էին խորհրդարանի մեծամասնական դաշինքներին, որոնք կենտրոնացած էին ՀՀԿ-ի՝ որպես իշխող կուսակցության, շուրջ: Ինչպես խորհրդարանական մակարդակում, կոալիցիաների կապակցվածության աստիճանը բավական ցածր էր նաև կառավարությունում: 2000-2014թթ. կառավարությունը լուծարվել է ութ անգամ, քանզի ավելի փոքր կուսակցությունները կամ դադարել են գոյություն ունենալ կամ միացել են որևէ դաշինքի:

Հետխորհրդային առաջին տասնամյակում Մոլդովան ունեցել է երկու մեծամասնական կառավարություն և երեք տեխնոկրատական կաբինետ⁷⁴: 2001-2009թթ. կոմունիստների վերահսկողության տակ գտնվող կառավարությունները ֆորմալ առումով տեխնոկրատական էին, սակայն 2009թ. վերջից դրանք վայելում էին խորհրդարանական մեծամասնության բացահայտ աջակցությունը:

Ուկրաինայում առաջին կոալիցիոն կառավարությունը ձևավորվեց 2002թ. նոյեմբերին, երբ նախագահը սուր քաղաքական ճգնաժամի պատճառով լուծարեց տեխնոկրատական կառավարությունը: Սակայն 2010-2013թթ. նախագահ Յանուկովիչի օրոք կառավարությունը կրկին դարձավ նախագահական: Վրաստանում նույնպես առաջին կուսակցական կառավարությունը ձևավորվեց Վարդերի հեղափոխության արդյունքում հաղթանակած դաշինքի կողմից և պահպանվեց 2003թ. նոյեմբերից մինչև 2005թ. փետրվար: Մինչև 2012թ. կաբինետները դարձան դե ֆակտո նախագահական՝ չնայած Սակաշվիլու «Միացյալ ազգային շարժման» խորհրդարանական աջակցությանը: 2012 թվականից կառավարությունները մշտապես հիմնվել են կոալիցիոն մեծամասնության վրա⁷⁵: Ղրղզստանը երրորդ երկիրն է, որտեղ առաջին կուսակցական կաբինետները 2005թ. Կակաչների հեղափոխությունից հետո կարճ ժամանակ անց փոխարինվեցին դե

⁷³ Markarov A., Op cit., pp. 81–2:

⁷⁴ Protsyk O., Intra-Executive Competition between President and Prime Minister. Patterns of Institutional Conflict and Cooperation under Semi-Presidentialism, *Political Studies*, 2006, 54, 2, 219–244.

⁷⁵ Berglund C., Op. cit.; Nakashidze M., Op. cit.

Ֆակտո նախագահական կաբինետներով: Խորհրդարանում մեծամասնական աջակցություն վայելող կառավարությունները դարձան սովորական երևույթ 2010թ.՝ հաջորդ վարչակարգի տապալումից հետո⁷⁶:

Ներպետական և միջպետական համեմատությունները ցույց են տալիս, որ նախագահական կառավարություններն ավելի տևական են: Բոլոր ժամանակների ռեկորդը սահմանել է Ադրբեջանի ներկայիս վարչապետը, որը պաշտոնավարում է 1996թ. նոյեմբերից: Հինգ տարին գերազանցող պաշտոնավարման ժամկետ գրանցվել է նաև Բելառուսում, Ղազախստանում, Տաջիկստանում և Ուզբեկստանում: Հայաստանում ամենատևական կառավարությունը պահպանվել է երեք տարի (2009թ. ապրիլ-2012թ. հունիս): Կուսակցական համակարգի թույլ ինստիտուցիոնալացման պայմաններում կուսակցական կառավարության լուծարումը «ժողովրդավարական օրինաչափություն» չէ, այլ կառավարության անկայունության արդյունք: Վերջինս հաճախ հասնում է ծայրահեղ աստիճանի և հանգեցնում սուր քաղաքական ճգնաժամի: Մոլդովայում 2009թ. սեպտեմբերից մինչև 2016թ. հունվար գործած կուսակցական կառավարությունների գոյատևման միջին տևողությունը 11 ամիս էր, Ուկրաինայում 2005թ. հունվարից 2010թ. մարտ հինգ կուսակցական կառավարությունների դեպքում՝ 12,5 ամիս, իսկ Ղրղզստանում 2010թ. դեկտեմբերից 2016թ. հոկտեմբեր յոթ կուսակցական և անցումային կառավարությունների դեպքում՝ 10 ամիս:

3.3. Պատրոնաժային քաղաքականություն և կուսակցական կառավարություն

Ինչպես ընտրական, այնպես էլ օրենսդիր և գործադիր համակարգերում կուսակցությունների դերակատարությունը համապատասխանում է բուրգի համակարգին և կարող է դիտարկվել պատրոնաժային քաղաքականության շրջանակներում: Ինչպես արդեն ներկայացվել է, տարածաշրջանի բոլոր մրցակից բուրգ-համակարգերն ունեն ոչ միայն պյուրալիստական (կամ անկայուն իշխող-պյուրալիստական) կուսակցական համակարգեր, այլև պյուրալիստական բազմակուսակցական խորհրդարաններ և կուսակցական կառավարություններ:

⁷⁶ Fumagalli M., Op. cit., pp. 195-6.

Այս դեպքում իշխանության կուսակցությունները չեն կարողանում վերահսկել ընտրական, օրենսդիր եւ գործադիր համակարգերը երկարաժամկետ հեռանկարում: Այդ երկրներում գործադիրի «կուսակցականացման» համար կարևոր գործոն է էլիտայի համակարգման դինամիկան մրցակից բուրգ-համակարգերում: Պլուրալիստական խորհրդարաններում կուսակցական կառավարությունները ձևավորվում են այն ժամանակ, երբ էլիտաների միջև մրցակցությունը հասնում է ծայրահեղ աստիճանի, և մրցակից ցանցային բուրգերը կարողանում են համախմբվել և ձևավորել դաշինքներ:

Ուստի, նույնիսկ թույլ ինստիտուցիոնալացված կուսակցական համակարգի պայմաններում կուսակցական կառավարությունները վերջին տասնամյակում դարձել են նոր: Ընդհանուր առմամբ, տարածաշրջանի ավելի մրցունակ երկրներում ընթացող զարգացումները ցույց են տալիս, որ կուսակցությունները, որպես էլիտաների համակարգման ձևերից մեկը, ձեռք են բերել արդիականություն և իրականացնում են նոր գործառույթներ: Ընտրական և խորհրդարանական դաշտ մտնելուց հետո՝ կուսակցությունները նվաճել են կառավարող կամ իշխող կուսակցությունների նոր հարթություն: Կուսակցական կառավարությունները հաճախ կոալիցիոն կառավարություններ են: Դրանք ձևավորվում են էլիտան համակարգելու և բազմակուսակցական համակարգի ու քաղաքական պլուրալիզմի անկայուն պայմաններին դիմակայելու համար:

Ի հակադրություն դրան, տեխնոկրատական կառավարություններին առավել հաճախ բնորոշ է նախագահակենտրոն միասնական բուրգ: Այս դեպքում էլիտաների միջև մրցակցությունը թույլ է կամ ընդհանրապես բացակայում է: Ընդդիմությունը մարզինալացված է: Նախագահական բուրգը ներառում է միաժամանակ իշխանության կուսակցությանը և արբանյակային կուսակցությունների, իսկ ընդդիմությունը մեծ մասամբ կառուցողական է: Նման կառավարություններին բնորոշ են այնպիսի խորհրդարաններ, որոնք ձայների բացարձակ մեծամասնություն ունեցող իշխանության խմբակցությունների վերահսկողության ներքո են կամ խորհրդարանում առհասարակ չկան խորհրդարանական կուսակցական խմբեր: Կառավարություններն իրենց կազմով մաքուր «տեխնոկրատական» են, իսկ

ծագմամբ և գոյությամբ՝ «նախագահական»: Դրանք հաճախ ներկայացվում են որպես «փորձագիտական» կամ «ազգային փոխհամաձայնության» կառավարություններ՝ ցույց տալով ազգային առաջնորդի առաջնայնությունը կուսակցությունների նկատմամբ:

Կայացած միաբուրգ վարչակարգերի մեծ մասի դեպքում իշխանության կուսակցությունները արդյունավետ գործիք են նախագահի համար՝ որպես ձևավորվող կուսակցական համակարգի կենտրոնական տարր: Դրանք սահմանում են, թե ում նկատմամբ էլիտաները և ընտրազանգվածը պետք է դրսևորեն իրենց հավատարմությունը, օգնում են կյանքի կոչել նախագահի օրենսդրական օրակարգը, ապահովում են քաղաքական և վարչական էլիտաների համախմբումը ազգային առաջնորդի շուրջ՝ նպաստելով նախագահական համակարգի կայացմանը: Այդուհանդերձ, դրանք իշխող կուսակցություններ չեն: Նախագահը չունի որևէ խթան կիսելու գործադիր իշխանությունը վարչապետի հետ: Քանի որ նույնիսկ նախագահական համակարգում վարչապետն ունի իր քաղաքական կշիռը, այդ պաշտոնը հաճախ ընկալվում է որպես ցատկահարթակ նախագահի հավակնորդների համար: Գործող նախագահի համար առաջանում է լուրջ մրցակիցներին բախվելու վտանգ: Ուստի, վարչապետի հավատարմությունը կասկածի տակ առնելու դեպքում նախագահը համապատասխան կարգով կարող է պաշտոնանկ անել նրան՝ դարձնելով խորհրդարանի խոսնակ, նախարար, նախագահի աշխատակազմի բարձրաստիճան պաշտոնյա, պետական նավթային ընկերության ղեկավար կամ պարզապես ազատազրկել⁷⁷:

Ներկայումս այդ «կադրային ռոտացիան» շարունակվում է Ղազախստանում: Նախագահ Նազարբաևը փոխում է վարչապետներին յուրաքանչյուր 2-5 տարին մեկ: Սա փաստում է բավական փխրուն նախագահական բուրգի կամ ավելի կասկածամիտ ու

⁷⁷ **Kangas R. D.**, Uzbekistan. The Karimov Presidency - Amir Timur Revisited. *Cummings S. N. (ed.): Power and Change in Central Asia*. London: Routledge, 2002, pp. 130–149; **Isaacs R.**, Op. cit., p. 79; **Nurumov D., Vashchanka V.**, Constitutional Development of Independent Kazakhstan, *Elgie R., Moestrup S. (eds.), Semi-Presidentialism in the Caucasus and Central Asia*, Palgrave Macmillan, 2016, pp. 143–172; **LaPorte J.**, Semi-Presidentialism in Georgia, *Elgie R. and Moestrup S. (eds.) Semi-Presidentialism in the Caucasus and Central Asia*, London: Palgrave Macmillan, 2016, pp. 91–118.

զգուշավոր նախագահի մասին: Ավելի տարածված օրինակ է «գերկայուն» կառավարությունը, որը փաստում է միաբուրգ համակարգի կայացածության բարձր մակարդակի մասին: Օրինակ, 1990-ականների առաջին կեսին, երբ Տաջիկստանի նախագահ Ռախմոնի նախագահությունը բավական վիճահարույց էր, երկրի չորս կառավարությունները գոյատևեցին գրեթե մեկ տարի, մինչդեռ հաջորդ երկու կառավարությունները՝ համապատասխանաբար չորս և տասնչորս տարի: Ռուսաստանում Ելցինի նախագահության օրոք կառավարությունները գոյատևեցին տասնհինգ ամիս, իսկ հաջորդ նախագահի օրոք՝ ավելի քան 29 ամիս: Կայացած նախագահական բուրգեր ունեցող մրցունակ վարչակարգերի օրինակներն ավելի շատ են: Վրաստանի տեխնոկրատական, անկուսակցական կառավարությունները, որոնք վերահսկվում էին Սաակաշվիլու կայացած բուրգի կողմից (2005-2012), ավելի երկար գոյատևեցին (ավելի քան քսաներկու ամիս), քան դրան հաջորդած կուսակցական կառավարությունները, որոնք ձևավորվել էին թույլ կապակցված և ներառական «Վրացական երազանք» բուրգի կողմից (տասը ամիս): Վորոնինի նախագահության օրոք (2001-2009թթ.), Մոլդովայի տեխնոկրատական կառավարությունների կայունությունը ցույց է տալիս, որ համապարփակ նախագահական ցանցի գոյությունը կարևոր պայման է, նույնիսկ այն դեպքում, երբ նախագահն ընտրվում է խորհրդարանի կողմից:

Էլիտաների միավորումը միաբուրգ համակարգում ոչ թե կուսակցությունների, այլ նախագահի շուրջ համախմբման արդյունք է: Դա բնորոշ է Ռուսաստանին, Ղազախստանին, Վրաստանին՝ Սաակաշվիլու օրոք, Մոլդովային՝ Վորոնինի օրոք: Ի հակադրություն դրան, մրցակից էլիտաներ ունեցող համակարգերում, ինչպիսին էր Մոլդովան 2009թ.-ից հետո, Վրաստանը Սաակաշվիլու նախագահությունից հետո և Ղրղզստանը, ավելի թույլ նախագահակենտրոն են: Փոխարենը, նախագահի պաշտոնն այն հիմնական պարզն է, որի համար մրցակից խմբերը մտնում են կոշտ պայքարի մեջ: Դրան հաջորդում է վարչապետի պաշտոնը, որը հատկապես կարևոր է կիսանախագահական համակարգի խորհրդարանական-նախագահական տեսակի դեպքում, երբ կառավարությունը հաշվետու է միայն խորհրդարանի առջև և գործում է նախագահից անկախ:

Այդպիսով, պատրոնաժային ռեժիմի կայացման ձախողման պայմաններում էլիտան օգտագործում է կուսակցությունները՝ կառավարությունը և վարչապետի պաշտոնը նվաճելու համար: Ի տարբերություն միաբուրգ համակարգերին բնորոշ իշխանության կուսակցությունների, որոնք նպաստում են էլիտայի համախմբմանը նախագահի շուրջ, ավելի մրցունակ վարչակարգերում գործող կուսակցություններն ունեն ազդարարող գործառույթ մրցակից ցանցերի համար:

Եզրակացություն

Ազգային կուսակցական համակարգերի, խորհրդարանների և կառավարությունների վերլուծությունը վկայում է, որ եվրասիական երկրների կուսակցությունները և դրանց փոխազդեցության օրինաչափությունները զգալիորեն տարբերվում են միմյանցից: Այդ տարբերությունները պայմանավորված չեն միայն վարչակարգի որակով, որի թվային ցուցանիշը ներկայացնում է, օրինակ, Ֆրիդրմ Հաուսը: Դրանք արտացոլում են պատրոնաժային ռեժիմի երկու տարբեր մոդելներ, որոնք սահմանում են կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման շրջանակները և տարբերվում են մի երկրից մյուսը:

Առաջին մոդելը միաբուրգ համակարգն է, որը համախմբում է քաղաքական, վարչական և տնտեսական էլիտաներին ազգային առաջնորդի շուրջ: Դա հատկապես բնորոշ է հեգեմոնիատական կուսակցական համակարգերին, որտեղ մրցակցությունը չափազանց թույլ է կամ առհասարակ բացակայում է: Այդ կուսակցական համակարգերը կենտրոնացած են լավ կազմակերպված և անձնավորված «իշխող կուսակցությունների» շուրջ: Որպես նախագահական ցանցի ձևայնացված դրսևորումներ՝ դրանք պետության գլխի իշխանությունը տեղափոխում են հանրային քաղաքականության ոլորտ: Դա բնորոշ է Ադրբեջանին, Ղազախստանին, Ռուսաստանին, Տաջիկստանին, Թուրքմենիստանին և Ուզբեկստանին: Հատկանշական է, որ այս երկրներից ոչ մեկում կուսակցությունները երբևէ չեն ունեցել մուտք դեպի գործադիր համակարգ: Ուստի, չնայած դրանք երբեմն կոչվում են «իշխող կուսակցություններ», այդուհանդերձ չեն մասնակցում կառավարման գործընթացին: Ղազախստանը, Ռուսաստանը և Ուզբեկստանը այս

խմբի այն երկրներն են, որտեղ օրենսդիր մարմինները կառուցված են կուսակցական գծերով և, միաժամանակ, գտնվում են իշխանական կուսակցության խիստ վերահսկողության ներքո:

Վրաստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Ուկրաինան և Հայաստանը ներկայացնում են ցանցային փոխգործակցության երկրորդ՝ ավելի դինամիկ մոդելը: Այստեղ բազմիցս ձևավորվել և քանդվել են միաբուրգ համակարգեր՝ փոխարինվելով մրցակից բուրգերով, որոնցում հետագայում տեղի են ունեցել վերադասավորումներ և նոր փորձեր են արվել ստեղծելու իշխանության միասնական ցանց: Ընդհանուր առմամբ, քաղաքական մրցակցության աստիճանն այդ համակարգերում, այդ թվում՝ կուսակցությունների ներսում, ավելի բարձր է, քան կայացած միաբուրգ համակարգերում: Դա են փաստում Ֆրիդրմ Հաուսի տված գնահատականները: Մրցակցությունը բնորոշվում է էլիտայի բազմակարծությամբ և քաղաքական բացությամբ, որն ուղեկցվում է քաղաքական անկայունությամբ: Վերջինս ավելի բարձր է Մոլդովայում և Ուկրաինայում, իսկ առավել ցածր՝ Հայաստանում: Վերջինիս վարած քաղաքականությունը մի քանի ասպեկտներով մոտ է Ռուսաստանին՝ միաբուրգ համակարգերից առավել մրցունակին:

Այդ վարչակարգերի ընդհանուր մրցունակությունը համապատասխանում է կուսակցական համակարգերին, որոնք միաժամանակ ավելի քիչ և ավելի շատ են ինստիտուցիոնալացված, քան առաջին խմբի երկրների դեպքում է: Ավանդական մոտեցման համաձայն կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացումը թվում է թույլ գերինստիտուցիոնալացված միաբուրգ կուսակցական համակարգերի համեմատ, քանի որ բառացիորեն բոլոր կուսակցություններն անկայուն են, իսկ այն կառույցները, որոնցում կենտրոնացված է միջկուսակցական մրցակցությունը, պարբերաբար ենթակա են վերակազմակերպման: Մակայն, հողվածում ներկայացված մոտեցման համաձայն ինստիտուցիոնալացումը չպետք է շփոթել կայունության հետ: Այն ավելի ուժեղ է բազմակարծ երկրներում, քանզի կուսակցությունները կազմված են ամենակարևոր խաղացողներից ոչ միայն ընտրական, այլև օրենսդրական, և, որ առավել կարևոր է, կառավարական հարթությունում:

Մրցունակության բարձր մակարդակը և կուսակցությունների կարևորությունը կապված են բոլոր երեք համակարգերում առկա բարձր անկայունության հետ: Տարածաշրջանի գրեթե բոլոր վարչակարգերն ունեն իշխանության կուսակցություններ, սակայն այստեղ դրանք ունեն ավելի կարճ կյանք և ավելի փխրուն են, քան միաբուրգ համակարգ ունեցող երկրներում: Դրանք բախվում են քիչ թե շատ լուրջ մրցակցության ընտրական դաշտում, որն արտահայտվում է կուսակցական համակարգերում: Դրանք հաճախ տատանվում են պլուրալիստական և իշխող տեսակների միջև: Կուսակցական համակարգերի ընդհանուր անկայունությունը դրսևորվում է նաև խորհրդարանում, որը կազմված է կուսակցություններից և պարբերաբար վերակազմավորվող կուսակցական դաշինքներից: Վերջին տասնամյակում կուսակցությունները դարձել են առանցքային դերակատարներ կառավարության ձևավորման և լուծարման հարցում, որոնց գործունեությունը խաթարվում է անկայունության պատճառով: Եվրասիական պետությունների կուսակցությունները դարձել են կարևոր դերակատարներ միայն այն պատրոնաժային վարչակարգերում, որոնցում ձախողվել է միաբուրգ համակարգի կայացման գործընթացը:

Eurasian Multipartism: Variations on a Theme

PETRA STYKOW

Ludwig-Maximilians Universität München, Germany

The paper analyzes the structure and competitiveness of party systems, the degree of institutionalization of parliamentary parties, and the role of parties in making and breaking governments in Eurasia's twelve minimal and non-democratic countries. Within the hegemonic party systems of Kazakhstan, Russia, Uzbekistan, Azerbaijan, Tajikistan and Turkmenistan, personalist dominant parties translate presidential power into the electoral and legislative arenas. However, they are not 'ruling parties.' By contrast, Georgia, Kyrgyzstan, Moldova, Ukraine, and to a lesser degree Armenia feature more pluralist, competitive national and legislative party systems that are plagued by the high instability of organizations and their coalitions. Only in this group have parties also become the key actors in government formation and termination. The two patterns mirror the structure and dynamics of network-based 'power pyramids' in patronal regimes rather than a genuine 'partyization' of politics akin to Western democracies.